

## ՍԴՅԿ Անգարայի Մեջ Մասնակցեցաւ HDP-ի Համագումարին «Այն Տարածքը, Որ Քիւրտիստան Անուանեցիք, Արեւմտեան Հայաստանն Է», Յիշեցուց Ընկ. Ալեքսան Քեօշկերեան



Անգարայի մեջ Հազարաւորներ կը մասնակցին  
HDP-ի համագումարին

Թուրքիոյ Ժողովուրդներու Ժողովրդավարական Կուսակցութեան (HDP) հերթական չորրորդ համագումարը տեղի ունեցաւ Անգարայի մարզական սրահին մէջ, 23 փետրուար 2020-ին, «Մենք Դէպի Ապագայ Կ'երթանք» կարգախօսով եւ աւելի քան 20.000 մասնակիցներու ներկայութեան:

Համագումարին կը մասնակցէին բազմաթիւ հիւրեր Թուրքիայէն եւ արտերկրէն: Արտասահմանցի հիւրերը եկած էին 28

տարբեր երկիրներէ, որոնց շարքին էր նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, որուն ներկայացուցիչն էր Կեդրոնական Վարչութեան անդամ ընկեր Ալեքսան Քեօշկերեանը:

Լստ տուեալներու, այս տարուան արտասահմանեան մասնակցութիւնը կը համարուի մինչ այժմ տեղի ունեցած համագումարներու ամենամեծ պատուիրակութիւնը:

Շար.ը էջ 4

## Փաշինեան Մեկնաբանեց ԼՂ Հարցի Լուծման Վերաբերեալ Միւնիխի Մեջ Ըրած Իր Յայտարարութիւնները



Վարչապետ Նիկոլ Փաշինեան Պետրոս Ղազարեանի հետ  
հարցազրոյցի ընթացքին

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը վերահաստատեց Միւնիխի անվտանգութեան համաժողովի շրջածիրէն ներս իր կողմէ եղած յայտարարութիւնը, որ Լեւոնային Ղարաբաղի համար չկան տարածքներ, կայ անվտանգութիւն, եւ Արցախը չի կրնար գիշել իր անվտանգութիւնը: «Արմենիա»-ի փոխանցմամբ՝ այս մասին Փաշինեանն ըսած է Հանրային հեռուստաընկերութեան տուած հարցազրոյցին մէջ:

«Մենք ասում ենք, որ այդ

«սթաթուս քոն», երբ ձեւաւորուել է, երբ Արցախի ինքնապաշտպանական ուժերն այդ տարածքները վերցրել են վերահսկողութեան տակ, նրանք դա արել են, որպէսզի Ատրպէյճանի յարձակողական գործողութիւնները Լեւոնային Ղարաբաղից հնարաւորինս հեռացուն այնքան, որպէսզի դառնան անհասանելի: Եթէ կայ առաջարկ անվտանգութեան ապահովման նոյնքան արդիւնաւէտ մի գործիքի,

Շար.ը էջ 5

## Լոս Անճելոսի Հայութիւնը կը Պատրաստուի Նշելու Հայոց Ցեղասպանութեան 105րդ Ամեակը

Ապրիլ 24, 2020-ին, Լոս Անճելոսի Հայ-Ամերիկեան համայնքը, միասնաբար պիտի նշէ Հայոց Ցեղասպանութեան 105րդ ամեակը, յիշատակելու համար 1,5 միլիոն նահատակները եւ արդարութիւն պահանջելու միացեալ ձայնով:

Այն կազմակերպութիւնները, որոնք աւանդաբար ծրագրած են Ապրիլ 24-ի յիշատակումը, գիտակցելով, որ միասնութեան մէջ է ուժը, համատեղուելով աշխատանք կը տանին կազմակերպելու սրբադասուած նահատակներու յիշատակումը եւ պահանջելու՝ արդարութիւն, հատուցում եւ վերականգնում: Համախմբումին մաս կը կազմեն՝ Հայոց Ցեղասպանութեան Ոգեկոչման Միացեալ Մարմինը (UACLA), Միացեալ Հայ Երիտասարդները (UYA) եւ Հայոց Ցեղասպանութեան Յանձնաժողովը (AGC), որը կը ներկայացնեն հայկական կազմակերպութիւնները, որոնց շարքին են՝ Հայ Առաքելական, Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական եկեղեցիներ, Հայ Ցեղափոխական Դաշնակցութիւնը, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւնը, Ամերիկայի Արեւմտեան Շրջանի Հայ Դատի Յանձնախումբը, Ամերիկայի Հայկական Համագումարը, Հայ Ամերիկեան Խորհուրդը, Հայ Իրաւաբաններու Միութիւնը, Պոլսահայ Միութիւնը, Հայ Օգնութեան Միութիւնը, Հ.Մ.Ը.Մ-ը, Բաց վերքերը եւ համայնքի մէջ յայտնի կարգ մը այլ կազմակերպութիւնները:

Առաւօտեան ժամը 8:30-ին կը նախատեսուի ուխտագնացութիւն դէպի Մոնթեպելլոյի Հայոց Ցեղասպանութեան զոհերու նուիրուած յուշահամալիր, ուր կազմակերպութիւններու ներկայացուցիչները ծաղկեպսակներ կը զետեղեն յուշարձանի մօտ եւ իրենց մասնակցութիւնը կը բերեն հոգեհանգստեան պատարագին:

Ժամը 11:00-ին, Հոլիվուտի Փոքր Հայաստան թաղամասէն կը սկսի Արդարութեան Քայլարշաւը: Տասնեակ հազարաւորներ պիտի

Շար.ը էջ 5


## Հայ Ամերիկեան Խորհուրդը կը Զօրակցի Պըրնի Սենտրոյի Թեկնածութեան

Հայ Ամերիկեան Խորհուրդի (ՀԱԽ) քաղաքական մարմինը իր զօրակցութիւնը յայտնեց Ամերիկայի նախագահական ընտրութիւններուն Դեմոկրատական Կուսակցութեան դրօշակակիրը դառնալու ձգտող Պըրնի Սէնտրոյին:

Երեքշաբթի, Մարտ 3-ին Քալիֆորնիոյ մէջ տեղի ունենալիք նախնական ընտրութիւններուն առթիւ ՀԱԽ կողմէ շրջանի հայութեան՝ քուէարկելու ի նպաստ Սէնտրոյին:

«Ծերակուտական Սէնտրոյ եղած է հետեւողական ախոյեանը՝ մարդկային իրաւունքներու պաշտպանութեան, ազատութիւններու եւ Ամերիկահայութեան վերաբերող օրինագիծերու աջակցութեան գծով: Այս բոլորը ապացոյց են, որ ան ունի ղեկավարի անհրաժեշտ յատկանիշները՝ դառնալու Միացեալ Նահանգներու նախագահը:

«Հայաստան օրինագիծերու շարքին են անոր քուէարկութիւնները՝ Հայաստանին յատկացուցած օժանդակութեան մեծացման, Հայկական Ցեղասպանութեան Ծերակուտի կողմէ ճանաչման, Թուրքիոյ եւ Ատրպէյճանին օգնութեան նուազեցման՝ այդ երկիրներուն մէջ մարդկային իրաւունքներու խախտումներուն եւ UNESCO-ի կողմէ



Ամերիկայի նախագահական  
թեկնածու՝ Ծերակուտական  
Պըրնի Սենտրոյ

ճանչցուած Հայկական հին յուշարձաններու քանդումին պատճառաւ», - ըսուած է ՀԱԽ-ի յայտարարութեան մէջ:

ՀԱԽ կը յիշեցնէ որ, Պըրնի Սէնտրոյ միակն էր որ առիթ տեղծեց հանդիպելու Հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ ու լսելու անոնց մտահոգութիւնները: Որպէս գաղթականի զաւակ, որու ծնողները այս ափերը եկած են փախչելով հալածանքներէ, ան լաւապէս կը հասկնայ մեզ:

# ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Արցախեան Ընտրութիւններ. Անակնկալներ՝ Ամէն Օր

ՄԱՆՈՒԷԼ ՍԱՐԳՍԵԱՆ,  
ՈԱԳՅԿ ՏՆՕՐԵՆ

Արցախեան ընտրութիւնները նկատմամբ հետաքրքրութիւնը հայ հանրութեան շրջանում բաւական բարձր է: Մամուլը մեծ ուշադրութիւն է դարձնում այդ թեմային: Սակայն լաւ պատկերացում կազմել այն մասին, ինչ տեղի է ունենում, այնքն էլ հեշտ չէ: Քիչ են վերլուծական նիւթերը՝ աւելի յաճախ հրապարակում են այս կամ այն քաղաքական ուժերի կողմնակիցների դիրքորոշումները եւ նախագահի պաշտօնի համար առաջադրուած թեկնածուների յայտարարութիւնները: Իրավիճակն ամենալաւ կարելի է հասկանալ Արցախի ներսից:

Քանի որ անցած շաբաթ ինձ վիճակուէջ բաւական երկար ժամանակ գտնուել Արցախում եւ հանդիպումներ ունենալ մեծ թուով մարդկանց հետ, սոյն յօդուածում կ'ուզենայի կիսել ներկայ իրավիճակի մասին իմ տպավորութիւնները: Իսկ կիսելու բան իսկապէս կայ: Ընտրութիւններում տիրող իրավիճակն աննախադէպ է: Արցախում երբեք չի եղել մի այնպիսի իրադրութիւն, երբ վճռորոշ գործօն չլինէր ՀՀ բարձրագոյն ղեկավարութեան կարծիքը: Ինչ էլ որ տեղի ունենար՝ բոլորի հայեացքն ուղղուած էր Երեւանի կողմը: Բայց Հայաստանում կատարուած իշխանափոխութիւնը եւ բուն Արցախում դրան յաջորդած սոցիալ-քաղաքական մթնոլորտի փոփոխութիւնները քանդեցին ընտրական գործընթացների վրայ ազդեցութեան աւանդական մեխանիզմները:

Թէպէտ Արցախի գործող իշխանութիւնները պաշտօնապէս պահպանում են իրենց դիրքերը, բայց հասարակութեան վրայ նրանց ազդեցութիւնը շատ թույլ է: Վախի մթնոլորտը զգալիօրէն չբացել է՝ հարկադրանքի առաջուկ էղանակները սպառել են իրենց արդիւնաւէտութիւնը: Այդ հանգամանքը դրսեւորուել էր արդէն իշխանութեան տեղական մարմինների 2019 թուականի սեպտեմբերեան ընտրութիւններում: Այդ ժամանակ էլ իշխանութիւններն առաջին անգամ զգացին զարգացող գործըն-

թացների հանդէպ իրենց անզորութիւնը: Ամէն ինչ որոշողն ընտրողների քուէն էր: Պարզուէջ նաեւ, որ ընտրողների մեծամասնութիւնն անպատրաստ էր նոր պայմաններին: Հին կողմնորոշիչները, այսինքն՝ պետերի հեռախօսազանգերը, «օգնութեան պատրաստ» այս կամ այն հեղինակութիւնների խոստումները եւ այլն, կորցրել էին իրենց ներգործութիւնը: Արդիւնքում ընտրողների ձայները ցրուել էին:

Նման մի բան էլ հիմա տեղի ունեցաւ: Սակայն բուն քաղաքական դաշտում սկսել էին իրենց զգալ տալ չափազանց անսովոր երեւոյթներ: Դա, նախեւառաջ, վերաբերում է նախագահների թեկնածուների շուրջը բեւեռների կազմաւորման գործընթացին: Նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններին մասնակցող երկու տասնեակի չափ կուսակցութիւններն առաջադրել էին նախագահի 14 թեկնածու: Բնականաբար՝ առաջին հերթին հետաքրքրութիւն էր ներկայացնում այն, թէ ինչպէս են կազմաւորուելու դաշինքներն այդ թեկնածուների շուրջ:

Այսօրուայ դրութեամբ գլխաւոր ինտրիգը նախագահական ընտրութիւններում Արցախի արտգործնախարար Մասիս Մայիլեանին աջակցելու՝ Մամուլէլ Բաբայեանի որոշումն է: Նման որոշում կարելի էր ակնկալել այն բանից յետոյ, երբ պարզ դարձաւ, որ Բաբայեանը չի կարող առաջադրել իր թեկնածութիւնը (այդպէս էլ նրան չէր յաջողուել փոխել օրէնքը): Անտեսել ընտրողների՝ իր համար հաւաքած ստորագրութիւնները, նոյնպէս չէր կարող: Բաբայեանի կուսակցութիւնը որոշել էր առանձին ցուցակով մասնակցել խորհրդարանական ընտրութիւններին՝ որպէս գործող իշխանութիւններին ընդդէմ դիրք ուժ: Կուսակցութիւնը չէր կարող ձայները տալ նախագահի որեւէ իշխանամէտ թեկնածուի: Մնում էր անել այն, ինչ արուէջ: Բնականաբար՝ Մասիս Մայիլեանի նախընտրական դիրքերը կտրուկ ուժեղացան: Իշխանութիւնների գլխաւոր թեկնածուն՝ նախկին պետնախարար Արայիկ Յարութիւնեանը, որն այս ամիսներին «յաղթական քայլերի» էր ցու-

ցադրում, փոքր-ինչ մեղմեց աւելը: Թուլացան նաեւ այն ուժերի գաղափարական դիրքերը, որոնք ինչ-որ պահի փորձում էին նախընտրական օրակարգ մտցնել «սորոսականի» գաղափարը՝ Մայիլեանին նման կերպար «կայցնելու» նպատակով: Մի տեսակ չի կապակցուած այդպիսի կերպարը մէկի հետ, ում սատարում էր «ռուսամէտ» Բաբայեանը:

Բայց որոշ բարդութիւններ ունեցաւ նաեւ Մասիս Մայիլեանը: Նրա շատ կողմնակիցներ ոչ մի կերպ չեն ընկալում Մայիլեանի եւ Բաբայեանի սերտ միութեան հնարաւորութիւնը: Շատերը չէին ցանկանայ, որ ոչ միանշանակ իմիջ ունեցող նախկին ղեկավարը պետական կառավարման համակարգ վերադառնայ: Մայիլեանը նոյնիսկ ստիպուած էր հանդէս գալ յատուկ կոչով եւ պարզաբանումներ տալ գործադիր իշխանութիւն կազմաւորելու՝ իր յետագայ մօտեցումների վերաբերեալ: Նշուել էր, որ Բաբայեանի հետ որեւէ կադրային հարցեր ինքը չի քննարկել եւ, առաւել եւս, այդ թեմայով որեւէ պայմանաւորութիւններ չկան:

Երկրորդ անակնկալը մատուցեց նախկին բարձրաստիճան գիտնորական Գրիգորի Սահակեանը, որը դուրս եկաւ իր նորաստեղծ կուսակցութիւնից եւ յարեց Մասիս Մայիլեանին: Ստեփանակերտի քաղաքապետի ընտրութիւններին մասնակցած եւ բաւական բարձր իմիջ ունեցող Սահակեանը գլխաւորեց այն կուսակցութիւնների նախընտրական դաշինքի ցուցակը, որը պաշտպանում է Մայիլեանի թեկնածութիւնը: Բացի դրանից, նա փոքր-ինչ վանեց Բաբայեանի անուան ստուերը Մայիլեանի կերպարից:

Ամէն դէպքում՝ գլխաւոր բեւեռները մէկի կերպարը սկսում է դուրս գալ հասարակութեան ուշադրութեան կեդրոն: Համապատասխանաբար՝ ինչ-որ փոխակերպումներ պէտք է կատարուեն միւս ճամբարներում: Այդ իմաստով ուշադրաւ է նախագահի թեկնածու, ղեկավար Վիտալի Բալասանեանի կերպարը: Դէպքերի վերը նկարագրուած շրջադարձի հենքին նրա կերպարը մի տեսակ ստուերում է: Պարզ չէ, թէ ինչ յարաբերութիւն-

ների մէջ է նա գործող իշխանութիւնների հետ՝ այն պայմաններում, երբ կտրուկ հակադրուած է Հայաստանի նոր իշխանութիւններին: Տպաւորութիւն է, թէ նախագահ Բակո Սահակեանի թիմը նրանից հեռաւորութիւն է պահպանում: Յամենայն դէպս՝ Ստեփանակերտի հանրութեան միջավայրում այդպիսի կարծիքը գերակշռում է:

Եւս մէկ կարեւոր հանգամանք: Քանի որ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններն անցկացուած են միաժամանակ, բաւական հետաքրքիր է պատկերանում Աժ ապագայ խմբակցութիւնների իրավիճակը: Այն դէպքում, եթէ նախագահական ընտրութիւններում յաղթելու համար երկրորդ փուլ պահանջուի, պէտք է պարզ լինի, որ թիմերից ոչ մէկին չի յաջողուելու ապագայ խորհրդարանում տիրանալ մանդատների մեծամասնութեանը: Տեսականօրէն այդպիսի մեծամասնութիւն կարելի է ստանալ միայն առաջին փուլում թեկնածուներից մէկի յաղթանակի դէպքում: Բայց ընտրազանգուածի անորոշութեան բարձր աստիճանը կարող է փոշիացնել ձայները: Այդ դէպքում առանց ապագայ խորհրդարանում մեծամասնութեան կոալիցիա ստեղծելու վերաբերեալ պայմանաւորութիւնների՝ չի ստացուի: Հաւանաբար այդ հանգամանքը մի շարք կուսակցութիւնների զսպում է կազմաւորելու նախընտրական դաշինքներ՝ շատերը հակուած են դաշինքներ կազմաւորել ընտրութիւններից յետոյ:

Այսպիսին է իրավիճակը, որը կարող է փոխուել ամէն օր: Ցանկացած անակնկալներ դեռ կարող են լինել:

## Սերժ Սարգսեանը Բոլորին Հանեց Փողոց

ՅԱԿՈՒ ԲԱՂԱԵԱՆ

Փետրուարի 25-ին Երեւանում մեկնարկել է երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի դատավարութիւնը: Այն ուղեկցուած է դատարանի դիմաց նրա համախոհների հաւաքով: Չնայած ցուրտ եղանակին, բայց, համախոհները եկել են՝ նախկին պաշտօնեաներ, պատգամաւորներ, գործարարներ, այլ քաղաքացիներ:

Նրանք ի հարկէ չէին կարող չգալ: Եւ ոչ այն պատճառով, թէ ինչ պէտք է անէր Սերժ Սարգսեանն առանց նրանց: Չէին կարող չգալ, որովհետեւ ինչ պէտք է անէին իրենք առանց Սերժ Սարգսեանի, ընդ որում թէ յեղափոխութիւնից առաջ, թէ յետոյ:

2018 թուականի Ապրիլի 25-ին, հրաժարականից երեք օր անց Սերժ Սարգսեանից տարածուէջ տեղեկութիւն, թէ կոչ է անում ՀՀ-ին մնալ միասնական՝ ինչ դիրքորոշում էլ որ ունենան վարչապետի թեկնածութեան շուրջ, ու նաեւ յորդորել

էր անդրադառնալ կուսակցութեան նոր նախագահի հարցին:

Սակայն, շաբաթներ անց այդ հարցը դուրս եկաւ օրակարգից, եւ Սերժ Սարգսեանը մնաց ՀՀ նախագահ, պահելով կորիզացած ՀՀ-ն: Սերժ Սարգսեանի որոշումն ի հարկէ պայմանաւորուած էր նախկին իշխող համակարգում հետցեղափոխական տրանսֆորմացիայով: Լքելով կուսակցութիւնը, նա ինքը գործնականում մնալու էր խաղից դուրս: Իսկ քանի որ Հայաստանին սպասում է թէ ներքին, թէ արտաքին բազմաշերտ ու բարդ խաղ, թերեւս որեւէ մէկն առնուազն այդ պահին Սերժ Սարգսեանից լաւ չէր պատկերացնում:

Միւս կողմից, մնալով խաղի մէջ, նա դրա մէջ պահեց նաեւ ՀՀ-ն, որովհետեւ հակառակ պարագայում՝ մարտիմէկեան գործի մեղադրանքով քաղաքական խաղում աշխուժացուած եւ այսպէս սասած բացայայտուած Ռոբերտ Քոչարեանը վերցնելու էր ամբողջ դաշտը: Իսկ դաշտը վերցնելուց յետոյ

Ռոբերտ Քոչարեանն ի հարկէ առաջինը «դուրս էր գրելու» ՀՀ-ն: Ընդ որում, նոյնն էր լինելու, եթէ Ռոբերտ Քոչարեանը վերադառնար առանց մեղադրական կարգավիճակի: Իսկ որ վերադառնալու էր, նա ինքը խոստովանեց մեղադրանքից յետոյ: Եւ Սերժ Սարգսեանն էլ թերեւս դա գիտէր դրանից առաջ:

Այդպիսով, Սերժ Սարգսեանը իր համակիրներին, նախկին իշխանութեան իր գործընկերներին, ենթականերին դուրս բերեց փողոց, որտեղ սակայն նրանք ոչ թէ Սարգսեանի համար են պայքարում, այլ իրենք իրենց, ու թերեւս դա աննախադէպ, նոր իրավիճակ է:

Որովհետեւ մինչ այդ, լինելով կամ կազմելով Սերժ Սարգսեանի իշխանական քաղաքական թիմը, նրանք գործնականում շանգստանում էին Սերժ Սարգսեանի պատասխանատուութեան վրայ: Հիմա հանգստանալու հերթը Սերժ Սարգսեանինն է:

«ԼՐԱԳԻՐ»



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԷ ԱՏԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

# ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Արարատ Միրզոյեան Կատահ է Որ, «Այոն»-ն Կապահովէ Անհրաժեշտ Ձայները

Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանի համոզմամբ, սահմանադրական փոփոխութիւններու հանրաքուէն պիտի կայանայ, եւ Ապրիլ 5-ին քաղաքացիները անհրաժեշտ թիւով քուէ պիտի տան:

Նշենք, որ Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասեանը եւ եւս 6 դատաւորներ պաշտօնանկ ընելու հարցով սահմանադրական փոփոխութիւնը ընդունելու համար անհրաժեշտ է մօտ 650 հազար քաղաքացիի կողմ քուէ:

Նախընտրական քարոզարշաւը թէեւ պաշտօնապէս արդէն մեկնարկած է անցած շաբաթէն, սակայն միջոցառումներ դեռ չեն կայանար: Ազգային ժողովի նախագահն ըսած է, որ քարոզարշաւի մեկնարկը պիտի տրուի վաղը կայանալիք դրամահաւաքի երեկոյին, ուր «Այոն»-ի շտապը պիտի ներկայացնէ, թէ ինչ կարգախօսով, երգով եւ գինանշանով պիտի մասնակցին:

Ի դէպ, «Ասում եմ այո» քարոզչական երգը վարչապետ Նիկոլ Փաշինեանն արդէն հրատարակած է ֆեյսպուքեան իր էջին, որ նաեւ քննադատական գնահատականներու արժանացած է: Հայկ Ստուերի ստեղծագործութիւնը սահմանադրական փոփոխութեան օգտին:

## ՀՀ Նախկին Վարչապետները Անձնական Երաշխաւորութիւն Պիտի Ներկայացնեն Ռոպերթ Քոչարեանի Համար

Հայաստանի նախկին վարչապետներ Վազգէն Մանուկեանը, Խոսրով Յարութիւնեանը, Կարէն Կարապետեանը, ինչպէս նաեւ Արցախի նախկին վարչապետ Անուշահան Դանիէլեանը կը պատրաստուին երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի խափանման միջոց կաշտին իրենց անձնական երաշխաւորութեամբ փոխարինելու առաջարկ ներկայացնել դատարանին: Այս մասին կը լսուին Քոչարեանի փաստաբանական խումբը:

«Ռոպերթ Քոչարեանի փաստաբանական խումբը ներկայումս պատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերը, որպէսզի առաջիկայ



Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեան

կայն Ազգային ժողովի նախագահը հաւանաբար, յատկապէս կրկնեց:

Չունի՞ք մտավախութիւն, որ կրնայ հանրաքուէն չկայանալ, 650 հազարէն աւելի «այո» չըլլայ հարցին, Միրզոյեանը պատասխանած է. «Ես իրատեսական չեմ համարում այդպիսի վարկածը: Ես կարծում եմ, որ ի վերջոյ հանրաքուէն կը կայանայ, եւ անհրաժեշտ թիւով «այո» ձայները Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները կը տան առաջարկուող փոփոխութեան օգտին»:

դատական նիստերից մէկի ընթացքում ներկայացնի համապատասխան միջնորդութիւնը», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Նախորդ տարուան Մայիսին դատաւոր Դաւիթ Գրիգորեանը՝ Արցախի ներկայ եւ նախկին նախագահներ Բակօ Սահակեանի եւ Արկարի Ղուկասեանի անձնական երաշխաւորութեամբ ազատ արձակած էր Ռոպերթ Քոչարեանը: Յունիս 25-ին Վերաքննիչ դատարանի դատաւոր Արմէն Դանիէլեանը բեկանած էր այդ որոշումը եւ կաշտի տակ վերադարձուցած Ռոպերթ Քոչարեանը:

## Հրայր Թովմասեան Դատական Հայց Ներկայացուցած է Ընդդէմ Նիկոլ Փաշինեանի

Սահմանադրական դատարանի (ՄԴ) նախագահ Հրայր Թովմասեանը դատական հայց ներկայացուցած է ընդդէմ վարչապետ Նիկոլ Փաշինեանի, կը տեղեկացնէ «Դատալեքս» տեղեկատուական համակարգը:

Հայցով ՄԴ նախագահը վարչապետին կը պահանջէ ներողութիւն խնդրել վերադառնալ հանդիսացող արտաքաղաքացիութիւններու համար եւ հերքել գրաւարտութիւն հանդիսացող տեղեկութիւնները:

Այն մակագրուած է Երեւան քաղաքի ընդհանուր իրաւասութեան դատարանի դատաւոր Գայիանէ Խաչատրեանին: Դատական նիստի օրը դեռ նշանակուած չէ:

Վարչապետ Փաշինեանը, յիշեցնենք, ըսած էր, որ Թովմասեանն իր ծառայութիւնները առաջարկած է, շողքորթած իրեն, իսկ Թովմասեանը այն հերքած էր: Ապա Փաշինեանը որպէս փաստ Թովմասեանի՝ իրեն նուիրած գրիչը հրատարակած էր, Թովմասեանն ալ յորդորած էր իր փաստաբաններուն հայցադիմում պատրաստել վարչապետի դէմ:

## Ձալալ Յարութիւնեանը Նշանակուած է Արցախի Պաշտպանութեան Նախարար

Արցախի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեան ստորագրած է հրամանագիր, որուն համաձայն՝ Ջօրավար Կարէն Աբրահամեանը ազատուած է Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար-պաշտպանութեան բանակի հրամանատարի պաշտօնէն:

Նախագահ Սահակեանի ստորագրած մէկ այլ հրամանագիրով՝ գորավար Ձալալ Յարութիւնեանը նշանակուած է Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան նախարար-պաշտպանութեան բանակի հրամանատար-պաշտպանութեան բանակի հրամանատարի առաջին տեղակալ-շտապի պետի պաշտօնէն:

## ԱԿԾ-ն Տուեալներ Ստացած է Կեղծ Ահաբեկչութեան Կոչերու Տարածման Մասին

ՀՀ ազգային անվտանգութեան ծառայութիւնը ստացած է փաստական տուեալներ, որ «Ֆեյսպուք» ընկերային ցանցին մէջ մտացածին կամ իրական անուններով բացուած շարք մը անհատական էջերու 3 օգտատէր 2019-ի Նոյեմբերէն մինչեւ 2020-ի Փետրուարն ինկած ժամանակահատուածին բաց հարթակի վրայ հրատարակած են կատարած են ազգային արժանապատուութիւնը նուաստացնելուն ուղղուած գործողութիւններ, ինչպէս նաեւ ահաբեկչութեան հրատարակչին կոչեր, որն առաջացուցած է անոնց կատարման իրական վտանգ: Այս մասին տեղեկացուցած են ԱԿԾ մամուլի կեդրոնէն:

«www.facebook.com» ընկերային ցանցում մտացածին կամ իրական անուններով բացուած մի շարք անհատական էջերի 3 օգտատէր 2019 թ. Նոյեմբերից մինչեւ 2020 թ. Փետրուարն ընկած ժամանակահատուածում բաց հարթակում հրատարակչորէն կատարել են ազգային արժանապատուութիւնը նուաստացնելուն ուղղուած գործողութիւններ, ինչպէս նաեւ ահաբեկչութեան հրատարակչին կոչեր՝ օգտատէրերի լայն լսարանի առջեւ քարոզելով նախկին եւ ներկայիս քաղաքական եւ հասարակական գործիչներին, ընկերային խմբերի հանդէպ բռնութեամբ զուգորդուած գործողութիւնների կատարում, որն առաջացրել է դրանց կատարման իրական վտանգ:

Յիշեալ արարքներ կատարելիս ենթադրեալ յանցագործութիւն կատարած անձինք թոյլ են տուել

## Հայաստանցիներու 90 Տոկոսը Կաշառակերութիւնը կը Համարէ Լուրջ Խնդիր

Հայաստանցիներու 90 տոկոսը կաշառակերութիւնը (քորուֆիցիան) կը համարէ լուրջ հիմնախնդիր, կը վկայէ «Թրանսփարենսի ինթըրնաշնլ» հակաքորուֆիցիոն կեդրոնի հարցումը, որ կայացած է 2019-ի Հոկտեմբերէն Դեկտեմբեր ժամանակահատուածին՝ 1500 քաղաքացիի շրջագրածէն ներս:

Հարցման նպատակը եղած է պարզել՝ քաղաքացիներու հակաքորուֆիցիոն ընկալումներու եւ վարքագիծի փոփոխութիւնը իշխանափոխութենէն ետք:

Հարցուածներու մեծամասնութեան կարծիքով մինչեւ 2018-ի իշխանափոխութիւնը քորուֆիցիան կրած է համատարած բնոյթ:

Դատարաններ, ՁԱՄ-ներ, դատախազութիւն՝ մատնանշուած են որպէս ամենաքորուֆիցիոն կառույցներ: Ընդ որում, դատարաններու մասին այսպէս կը մտածէ հարցուածներու գրեթէ կէսը:

«Թրանսփարենսի ինթըրնաշնլ» հակաքորուֆիցիոն կեդրոնի գործադիր տնօրէն Սոնա Այվազեանն այս պատկերը զարմանալի չի համարեր՝ շեշտելով՝ իշխանափոխութենէն ետք դատախազական համակարգին մէջ փոփոխութիւններ տեղի չեն ունեցած:

«Նոյնիսկ եթէ դատախազութիւնը փորձում է փոխել իր աշխատելու ընթացքը եւ այդպէս յարմարեցնել յետյեղափոխական պահանջներին, այդուհանդերձ կան էջ ընկալումներ, որ դեռեւս իրաւապահները էջպէս զարգացում, փոփոխութիւն չեն ապրել, նոյնը դատարաններին է վերաբերում: Այսինքն՝ սա շատ



վերաւորական արտայայտութիւններ հայ ժողովրդի բացարձակ արժէքների՝ Հայոց լեզուի եւ բանակի վերաբերեալ, բռնութեան կոչերով հանդերձ հրատարակել են ինչպէս ՀՀ իշխանութեան, Արցախի Հանրապետութեան բարձրատիճան պաշտօնեաների, այնպէս էլ Հայաստանի Հանրապետութեան 1-ին եւ 2-րդ նախագահների պատիւն ու արժանապատուութիւնը նուաստացնող ծաղրանկարներ:

Առերեւոյթ յանցագործութեան դէպքերի առթիւ ՀՀ ԱԿԾ քննչական բաժանմունքում յարուցուել է քրէական գործ ՀՀ քրէական օրէնագրքի համապատասխան յօդուածներով:

Նախաքննական մարմինը ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ իշխալ օգտատէրերի կապերի շրջանակը պարզելու, այլ յանցագործները բացառելու եւ հնարաւոր վտանգները չէզոքացնելու ուղղութեամբ», - նշուած է հարցազրույթի վերջում:

լուրջ ազդակ է, ըստ էութեան, իշխանութիւններին, որ այս երեք ոլորտների եւ ոչ միայն այս երեք, անշուշտ, սրանք մենք վերցրել ենք ոչ թէ որպէս ոլորտներ, բայց հիմնական հիմնարկներ, որոնք պայմանաւորում են առհասարակ երկրում օրինաւորութիւնը, ազգային օրինաւորութեան համակարգի հիմնական կառույցները են», - նշած է Այվազեանը:

Որպէս առաւել քորուֆիցիոնում ոլորտներ հարցուածները նշած են առողջապահութիւնն ու ճանապարհային ոստիկանութիւնը:

Հայաստանի փոխվարչապետ Մհեր Գրիգորեանի խորհրդակցական Արսէն Մանուկեանը որպէս արդիւնք մատնանշած է քորուֆիցիայի ընկալման համաթիւը, որ 2019-ին նախորդ տարուան համեմատ բարելավուած է իր դիրքերը 7 կէտով՝ 105-էն գրաւելով 77-րդ տեղը: Պաշտօնեան նշած է, որ կառավարութիւնն իր տարբեր նախաձեռնութիւններով կը շարունակէ պայքարը քորուֆիցիայի դէմ: Քորուֆիցիայի կանխարգելման յանձնաժողով, քորուֆիցիայի դէմ պայքարի ռազմավարութիւն՝ թուարկած է Արսէն Մանուկեանը:

«Հետազօտութեան մէջ նշուած է, որ ընդամենը 0,2 տոկոսն է, որ վստահում է եւ պատրաստ է օգտուել Azdararir.am կայքից, այսինքն՝ հարցազրույթիւն ուղարկել այդ համակարգին, աւելի շատ մարդիկ, ըստ հետազօտութեան արդիւնքների, նախընտրում են դիմել ոստիկանութիւն եւ ուղղակի նամակ գրել Հայաստանի Հանրապետութեան վարչապետին», - նշած է Մանուկեանը:

# ԼՈՒՐԵՐ

## Հայաստանը Երրորդ Ամենառազմականացուած Երկիրն է Աշխարհի Մէջ Եւ Առաջինը՝ Եւրոպայի

Country	\$	👤	🌐	GMI Score	Rank
Israel	6.5	5.9	3.5	891.7	1
Singapore	6.4	5.8	3.2	860.5	2
Armenia	6.5	5.9	3	853.6	3
Cyprus	6.1	5.7	3.2	828.2	4
Korea, Republic	6.3	5.7	2.9	821.3	5
Russia	6.5	5.1	3.2	818.5	6
Greece	6.2	5.4	3.2	818.3	7
Jordan	6.5	5.1	3	807.4	8
Belarus	6	5.6	2.9	799.1	9
Azerbaijan	6.4	5.2	2.8	799.1	10

Հայաստանը երրորդն է աշխարհի ամենառազմականացուած երկիրներու շարքին, առաջինը՝ Եւրոպայի, կը պնդէ BICC միջազգային կազմակերպութեան ամէնամեայ զեկոյցը:

Պոննիի մէջ գործող կեդրոնը կը փաստէ, որ Երեւանը ռազմական ծախսերուն կը տրամադրէ Համախառն ներքին արդիւնքի (ՀՆԱ) 6,5 տոկոսը՝ անցած տարիէն քիչ մը աւելի: Ընդ որում, այս ցուցանիշով Հայաստանը կը գե-

րազանցէ Ատրպէյճանը, որ դիտարկուած 154 երկիրներու շարքին մէջ զբաղեցած է 10-րդ հորիզոնականը:

Ուսումնասիրութիւնը նշած է. «Ղարաբաղեան չկարգաւորուած հակամարտութեան պատճառով կողմերը կը շարունակեն հակա միջոցներ ներդնել բանակին մէջ, թէ՛ Երեւանը, թէ՛ Պաքուն կ'արդիակաւանացնեն սպառազինութիւնները՝ մեծածաւալ համաձայնագրեր կնքելով Ռուսաստանի հետ»:

## «Քորոնա» Ժահրի Պատճառաւ Որոշուած Է Երկու Շաբաթով Դադրեցնել Իրանի Հետ Ցամաքային Հաղորդակցութիւնը

«Քորոնա» ժահրի կանխարգիւման յանձնաժողովի նիստին որոշում առնուած է երկու շաբաթով դադրեցնել Իրանի հետ ցամաքային հաղորդակցութիւնը:

Այս մասին ֆէյսպուքի իր էջին վրայ գրած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը, նշելով, որ նիստի արդիւնքներով որոշուած է նաեւ Իրանի հետ բեռնափոխադրումներն իրականացնել առանց սահմանափակումներու՝ կիրառելով վարորդներու նկատմամբ յատուկ հսկողութեան ռեժիմ, որեւէ սահմանափակում չկիրառել Հայաստանի եւ Իրանի քաղաքացիներու՝ հայրենիք վերադառնալու համար:

Բացի այդ, ըստ վարչապետի, որոշուած է «երկու շաբաթուան ընթացքին բարեկամ Իրանի իսլամական Հանրապետութեան կառավարութեան հետ ըլլալ սերտ հարաբերակցութեան մէջ, ամբողջացնել տեղեկութիւնները ԻԻՀ-ի մէջ «քորոնա» ժահրի տարածման ծա-

ւալներու վերաբերեալ՝ յետագայ ընելիքները ճշգրտելու համար»:

«Հարկ կը համարեմ արձանագրել, որ Հայաստանի մէջ Քորոնա ժահրով վարակուած չկայ եւ յոյս ունիմ՝ չունենանք: Հայաստանը ունի բոլոր անհրաժեշտ տեխնիկական եւ մասնագիտական արհիւրները Քորոնա վարակի ճշգրիտ ախտորոշման համար:», - գրած է Հայաստանի ղեկավարը:

Յիշեցնենք, որ «Քորոնա» ժահրի տարածումը կանխարգիլող յանձնաժողովը Հայաստանի մէջ կը գործէ Յունուար 31-էն:

Իրանի մէջ «քորոնա» ժահրէն մահուան ութերորդ դէպքը գրանցուած է: Մահուան ցուցանիշով Իրանը երկրորդն է աշխարհի մէջ՝ Չինաստանէն ետք: Ընդհանուր առմամբ, կիրակի օրուան տուեալներով, Իրանական հիւանդանոցներուն մէջ բուժում կը ստանար «քորոնա» ժահրով հիւանդ 43 մարդ, 785-ն ալ քահանութիւնի մէջ էին:

## Հայաստանէն Ապրանքներու Եւ Ծառայութիւններու Արտահանումը Աճած Է 10,3 Տոկոսով

2019 թուականին մշակող արդիւնաբերութիւնն աճած է 12 տոկոսով՝ Համախառն ներքին արդիւնքի (ՀՆԱ) կառուցուածքին մէջ 12,1 տոկոս կշիռ քով դառնալով տնտեսութեան առաջատար ճիւղը, այս մասին յայտնած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Հայաստանից ապրանքների եւ ծառայութիւնների արտահանումը 2019 թուականի արդիւնքներով աճել է 10,3 տոկոսով: Ընդ որում միջին արհեստատար ապրանքների արտահանումը աճել է 26,9 տոկոսով, իսկ բարձր արհեստատար ապրանքների արտահանումը՝ 13,5 տոկոսով», - գրած է վարչապետն իր ֆէյսպուքեան էջին:

Անոր ներկայացմամբ՝ գրօսաշրջութիւնը եւս աճած է 14,7 տոկոսով: «Եւ որպէս արդիւնք, տնտեսութեան ամենաարագ աճող ճիւղը եղել է կապուածութեան եւ հանրային սննդի ծառայութիւնների ոլորտը՝ 2018-ի համեմատ աճելով 27,2 տոկոսով», - նշած է Փաշինեանը:

## Սկսաւ Սերժ Սարգսեանի Եւ Միւս Ամբաստանեալներու Դատավարութիւնը



Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսեան մուտք կը գործէ դատարան

Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանի դատաւոր Վահէ Միսքեանի նախագահութեամբ ֆետրուար 25-ին սկսաւ Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի եւ միւսներու գործով դատավարութիւնը:

Պաշտօնաթող նախագահը ժամանած է դատական նիստին: Պիւտճէն մօտ կէս միլիաո դրամի յափշտակութիւնը կազմակերպելու համար մեղադրուող նախկին նախագահը մինչեւ դատարան մտնելը յայտարարութիւն ըրած է. «Հաշուի առնելով եղանակային պայմանները եւ այն հանգամանքը, որ յոյս կայ, որ Հայաստանում դեռեւս կան դատաւորներ, ում համար արդարադատութիւնը վեր է ամէն ինչից: Ուղիղ այնպէս, ինչպէս ինձ համար, ձեզ համար, հայ ժողովրդի մեծամասնութեան համար Լեւոնային Ղարաբաղի անկախութիւնը վեր է ամէն ինչից: Խնդրում եմ վերադառնալ տուն, զբաղուել ձեր առօրեայ հոգսերով՝ չմոռանալով երբեք Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան մասին»:

Ոչ մէկ խօսք ըսելով իրեն առաջադրուած մեղադրանքի մասին՝ Սարգսեանը փոխարէնը յիշեցուցած է, թէ ինքը աշխարհի ամենաբարձր ամպիոններէն պար-

բերաբար յայտարարած է ու այսօր ալ կը կրկնէ՝ Լեւոնային Ղարաբաղը երբեք պիտի չըլլայ Ատրպէյճանի կազմին մէջ. - «Սա եղել է իմ կեանքի գերագոյն նպատակը, այն ինձ ուղեկցելու է մինչեւ վերջ եւ ամենուր»:

Ի աջակցութիւն Սերժ Սարգսեանի դատարանի առջեւ էին նաեւ ՀՀԿ խօսնակ Էտուարտ Շարմազանովը, գործադիր մարմնի անդամ Վահրամ Պաղտասարեանը, Սարգսեանի եղբորորդին՝ Հայկ Սարգսեանը, Ֆուլթայլի ֆետերացիայի նախկին նախագահ Ռուբէն Հայրապետեանն ու նախկին փոխստիկանապետ Լեւոն Երանոսեանը:

Նախկին նախագահը կը մեղադրուի պետական պիւտճէն մօտ կէս միլիաո դրամի յափշտակութիւնը կազմակերպելու մէջ: Գործով մեղադրեալներ են նաեւ նախկին գիւղական նախարար Սերգօ Կարապետեանն ու Սերժ Սարգսեանի մտերիմ գործարարներէն համարուող «Ֆլեշ» ընկերութեան սեփականատէր Բարսեղ Բեգլարեանը, Գիւղական նախարարութեան նախկին պաշտօնեայ Գէորգ Յարութիւնեանը:

Սերժ Սարգսեանի նկատմամբ ընտրուած խափանման միջոցը չհեռանալու մասին ստորագրութիւնն է:

## ՄԴՀԿ Անգարայի Մէջ Մասնակցեցաւ

Շարունակուած էջ 1-էն

Համագումարի դիւանի չորս հոգինոց կազմին մաս մէջ էր հայագրի երեսփոխան Կարօ Փայլանը:

Շրջանաւարտ համախաղաչ հուշի ֆէրուին Պուլտան իր ելոյթին մէջ ըսաւ. «Քանի դեռ մենք կը շարունակենք պահպանել խաղաղութեան հասարակութեան պայմանագիրը, ԱԶԿ-ն եւ ԱԾԿ-ն պիտի չհասնին իրենց նպատակին: Հաւատացէք, որ անոնք առաջին ընտրութիւններէն դուրս պիտի գան իշխանութեան...: Անոնք լաւ գիտեն, մենք այլ վայրերէ չէնք եկած այս երկիրը: Մենք այստեղ էինք նախապատմական ժամանակաշրջանին, այստեղ պիտի մնանք յաւիտեան մեր լեզուով եւ մշակութիւնով:


Ապա, համագումարը ընտրեց յառաջիկայ երկու տարիներու համախաղաչները: Փէրուին Պուլտան (համախաղաչ հուշի), Միթհատ Սինճար (համախաղաչ): Երեկոյեան, բոլոր հիւր պատ-

ուիրակները, աւելի քան 125 հոգի, հրաւիրուած էին ընթրիքի, ուր նորընտիր համախաղաչներու խօսքէն ետք, ընկեր Ալեքսան Բէօզկէրեան ելոյթ ունենալով ըսաւ. «Ես Փարամազի կուսակիցն եմ, ՄԴՀԿ կեդրոնական վարչութիւնը կը ներկայացնեմ, եւ եկած եմ Լիբանանէն, կողքս նստող միւս հայ ներկայացուցիչը եկած է ԱՄՆ-էն:

«Իսկ մեր շուրջի եւրոպացի մասնակիցները չհասկցան, որ ինչպէս մենք այս տարածքներու հին եւ բնիկ ժողովուրդն ենք եւ եկած ենք հայկական կամ Հայաստան ներկայացնելու: Անոնք չէին գիտեն, որ այն տարածքը, որ քիչ առաջ Քիւրտիստան անուանեցիք, Արեւմտեան Հայաստանն է, որով վրայ մենք այլեւս չկանք, քանի որ ցեղասպանութեան ենթարկուեցանք, այդ հողերը բոլորիդ կը պատկանի, մեր ընդհանուր հայրենիքն է:

«Ձեզմէ կ'ակնկալենք, որ մեր իրաւունքն ալ պաշտպանէք: Դուք այստեղ ներսը մեր ձայնը եղէք, մենք արդէն դուրսը Ձեր ձայնն ենք»:

# Մահացած է Հայրենի Յայտնի Դերասան Եւ Բեմադրիչ Երուանդ Մանարեանը



Կեանքի 96-րդ տարին, փետրոսար 19-ի առաւօտեան մահացած է ժողովրդական արուեստագէտ, բեմադրիչ, գրող, դերասան Երուանդ Մանարեանը:

Ան նկարահանած է վաւերագրական եւ գեղարուեստական շարք մը ֆիլմեր, գրած է սենարներ «Տժվժիկ», «Տէրն ու ծառան» եւ այլ ֆիլմերու համար, նկարահանուած է շարք մը յայտնի ֆիլմերու մէջ, ինչպիսին է «Հարսնացուն հիւսիսէն» շարժանկարը:

Երուանդ Մանարեանը հիմնած է «Ազուլիս» տիկնիկային թատրոն-աշխատանոցը:

2003 թուականին Երուանդ Մանարեանին շնորհուած է Հայաստանի վաստակաւոր արթիսթի կոչում, 2018-ին՝ Թաւշեայ յեղափոխութենէն ետք՝ ժողովրդական արթիսթի կոչում, 2019-ին ալ՝ Երեւանի պատուաւոր քաղաքացիի կոչում:

Մանարեանն այն եզակի արուեստագէտներէն էր, որ նաեւ աշխոյժ քաղաքացիական դիրքորոշում ունէր, երկար տարիներ կը մասնակցէր ընդդիմութեան ցոյցերուն:

Երուանդ Մանարեանի մահուան կապակցութեամբ ցաւակցական ուղերձներ յղած են վարչապետ Նիկոլ Փաշինեանը եւ նախագահ Արմէն Սարգսեանը:

«Երուանդ Մանարեանը փայլուն ժողովրդական արթիսթ էր, որուն կերտած կերպարները հարստացուցած են հայ շարժանկարի արուեստն ու իրենց անմոռանալի տեղը գրաւած հայ հանդիսատեսի սրտին մէջ: Ան մեծ դերասան էր, սենարիսթ, բեմադրիչ, մանկավարժ, որ կը վայելէր համաժողովրդական մեծ սէրն ու համբաւը:

Մեծանուն արուեստագէտ ըլլալէ զատ, Երուանդ Մանարեանը Հայաստանի Հանրապետութեան աշխոյժ քաղաքացի էր, որ տարիներ շարունակ հանդէս կու գար յանուն արդարութեան պայքարի դիրքերէն՝ մշտապէս արտայայտելով իր յստակ դիրքորոշումը», - վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան փոխանցմամբ՝ մասնաւորապէս ըստած է Նիկոլ Փաշինեանի հեռագրին մէջ:

«Երուանդ Մանարեանի գործունէութիւնը յազեցած թատերաշրջան մըն էր, որ, ցաւօք, ընդհատուեցաւ: Կեանքի իններորդ տասնամեակին ալ ան կը շարունակէր ծրագրեր կազմել ու հաւատարմի մնալ ստեղծագործ մտածողութեան:

Երուանդ Մանարեանն իրապէս ժողովրդական արթիսթ էր, ան սիրելի եւ ընկալելի էր թէ՛ մեծերու, թէ՛ մանուկներու կողմէ: Անոր ստեղծած տպաւորիչ կերպարները եւ թեւաւոր դարձած խօսքերը միշտ պիտի մնան ժողովուրդի յիշողութեան մէջ», - նախագահի գրասենեակի փոխանցմամբ՝ իր ուղերձին մէջ մասնաւորապէս գրած է Արմէն Սարգսեանը:

## Հայոց Ցեղասպանութեան 105րդ Ամեակը

Շարունակուած էջ 1-էն

Քալեն Հովիվուտի սիրտը՝ Հովիվուտ եւ Ուեսթըրն պողոտաներու Հայոց ցեղասպանութեան Յուշահամալիրի հրապարակը, վերահաստատելու համար պարտաւորութիւնը, յանուն արդարութեան եւ ճշմարտութեան համար մղուած պայքարին:

Ժամը 2:30-ին, տեղի կ'ունենայ օրուայ եզրափակիչ միջոցառումը, Թրքական Հիւպատոսարանի առջեւ միացեալ բողոքի ցոյցը, ուր համայնքը կրկին իր ձայնը բարձրացնելով, Հայոց Ցեղասպանութեան համար կը պահանջէ արդարութիւն եւ փոխհատուցում:

Ապրիլ 24, 2020 թուականի Հայոց Ցեղասպանութեան նուիրուած այս միջոցառումները, կ'ըլլան առաջինը, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տան Պալատի եւ Ծերակոյտի Հայոց Ցեղասպանութեան բանաձեւերու միաձայնութեամբ ընդունումէն ետք, որը մեծ յաղթանակ մըն էր ողջ հայութեան համար: Միջոցառումներուն կը միանան նաեւ Դաշնակցային եւ Նահանգային քաղաքական ներկայացուցիչներ:

Կոչ կ'ուղղենք հայ համայնքի բոլոր գաւակներուն, Ուրբաթ, Ապրիլ 24-ին, յիշատակի այս կարեւոր միջոցառումներուն տասնեակ հազարաւոր մասնակցողներուն միանալու: Փոխադրամիջոցներ պիտի տրամադրուին Հայ Կեդրոններէն դէպի միջոցառումներու վայրերը:

Յաւելեալ մանրամասնութիւններ պիտի տրուին ապագայ հաղորդագրութիւններով:

# Պաշտպանութեան Նախարար Խիստ Թելադրանքներ Տուած է Ռազմական Ոստիկանութեան

Պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանը խորհրդակցութիւն կազմակերպած է Ռազմական ոստիկանութեան ներս, որու ընթացքին քննարկուած են զինուորական ծառայութեան ընթացքին մահուան ելքով դէպքերու, անոնց կանխարգելման, առկայ իրավիճակի, Ռազմական ոստիկանութեան աշխատանքին առնչուող եւ այլ հարցեր:



Ինչպէս «Ֆէյսպուքի» էջին գրառմամբ կը տեղեկացնէ Պաշտպանութեան նախարարութեան մամուլի քարտուղար Արծրուն Յովհաննիսեան, հանդիպման սկիզբը Դաւիթ Տօնոյեանը հրաժեշտ տուած է Ռազմական ոստիկանութեան նախկին պետ, գորավար-մայր Արթուր Պաղտասարեանին, որմէ ետք կազմակերպած է քանի մը քատրային որոշումներ՝ պաշտօններէն ազատուած են քանի մը բաժնի պետեր:

Նախարարը Ռազմական ոստիկանութեան (ՌՈ) պետի տեղակալ, գնդապետ Ալեքսանտր Աղաճանեանին յանձնարարած է ժամանակաւորապէս կատարել ՌՈ պետի պաշտօնական պարտականութիւնները:

Դաւիթ Տօնոյեանը ՌՈ անձնակազմին եւ գնդապետ Ալեքսանտր Աղաճանեանին տուած է

խիստ ցուցումներ, մասնաւորապէս շեշտած է կարգապահութեան ամրապնդման հարցի խիստ կարեւորութիւնը եւ պահանջած է կտրուկ բարձրացնել դաշտային հետախուզական աշխատանքներու որակը:

Երկուշաբթի օր վարչապետ Նիկոլ Փաշինեանի մօտ տեղի ունեցած էր խորհրդակցութիւն Ջինուած ուժերու մէջ այս տարուան առաջին մէկուկէս ամսուան ընթացքին մահուան 13 դէպքերու հետ կապուած, երկու օր անց պաշտօնակեղան Ռազմական ոստիկանութեան պետը եւ Ջինուած ուժերու բարոյահոգեբանական ապահովման վարչութեան պետը:

## ԼՂ Հարցի Լուծման Վերաբերեալ

Շարունակուած էջ 1-էն

այդ առաջարկը թող ձեւակերպուի, եւ հայ ժողովուրդը կը քննարկի՝ դա իր համար ընդունելի է, թէ ոչ», - ըսած է Փաշինեանը:

Վարչապետը անդրադարձած է նաեւ տարած քայլին ամբողջականութեան վերաբերեալ առկայ շահարկումներուն:

«Լեռնային Ղարաբաղն անկախութիւն է ստացել այնպէս, ինչպէս Ատրպէյճանը: Երբ խօսում են տարած քայլին ամբողջականութեան սկզբունքի մասին, այդ որ երկրի տարած քայլին ամբողջականութեան սկզբունքի մասին են խօսում: Երբ Ատրպէյճանն անկախութիւն է ստացել, Խորհրդային Միութեան տարած քայլին ամբողջականութիւնը պահպանել է արդեօք: Հակահարց կարող է հնչել, որ Խորհրդային Միութիւն պետութիւնն այլեւս գոյութիւն չունի, բայց գոյութիւն չունի նաեւ այն պետութիւնը, որի կազմում եղել է Լեռնային Ղարաբաղը, այդ պետութիւնը Ատրպէյճանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնն է: Այս թէգն ունի նրբութիւններ, որոնք պէտք է հաշուի առնել», - նշած է ան:

Նիկոլ Փաշինեան վերահաստատած է, որ հարցի որեւէ լուծում պէտք է ընդունելի ըլլայ Հայաստանի, Ղարաբաղի եւ Ատրպէյճանի ժողովուրդներուն համար, իսկ Ղարաբաղի հարցը չունի ռազմական լուծում:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի համոզմամբ՝ Արցախի ժողովուրդը պէտք է նախագահական ընտրութիւններուն քուէարկէ Հայաստանի Հանրապետութեան ժողովուրդի կողմէ ընտրուած օրինական իշխանութեան նկատմամբ թշնամանք քարոզողի օգտին: Այս մասին Փաշինեանն ըսած է հարցազրոյցին մէջ:

«Կարծում եմ, որ Արցախի

ժողովուրդը չպէտք է քուէարկի որեւէ թեկնածուի օգտին, որը Հայաստանի ժողովրդի օրինական իշխանութեան նկատմամբ վարում է թշնամական քարոզչութիւն, եւ այդպիսով հրահրում է ներգաղաչին թշնամութիւն: Այդպիսի ձեւով խօսել ու այդպիսի վերաբերմունք ցուցաբերել ժողովրդի կողմից ընտրուած օրինական իշխանութեանը, նշանակում է այդպիսի վերաբերմունք ցուցաբերել այդ իշխանութեանը ընտրած եւ վստահող ժողովուրդին», - ըսած է Փաշինեանը:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը Պետրոս Ղազարեանին տուած հարցազրոյցին մէջ անդրադարձած է Սահմանադրութեան փոփոխութիւններու նախագիծը վեներտիկ յանձնաժողովին ներկայացնելու հարցին: Վարչապետը նշած է, որ Գերմանիա այցի ընթացքին իրավիճակի վերաբերեալ քննարկումներ ունեցած է: Ան նշած է՝ միջազգային գործընկերները զարմացած են, որ Հայաստանի Հանրապետութեան մէջ գործող Սահմանադրական դատարանի ձեւաւորման շուրջ տրանսֆորմացիոն ձեւափոխութեան շրջանին քուլիսային պայմանաւորուածութիւններ ու նմանատիպ այլ գործընթացներ եղած են:

«Եւրոպացի գործընկերներին ուշադրութիւնն եմ հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ այս ողջ գործընթացը, որի դէպքում իրաւունքի շարաշահման հետ գործ ունենք, տեղի է ունեցել վեներտիկ յանձնաժողովի ուշադրութեան ներքոյ», - ըսած է վարչապետը:

Անոր խօսքով՝ վեներտիկ յանձնաժողովը պէտք է պատասխանէ այս հարցին: «Այս հարցը կը քննարկենք եւրոպացի գործընկերների հետ», - ըսած է վարչապետը՝ աւելցնելով, որ պէտք է հասկնալ, թէ ինչպէս պիտի վերաբերին վեներտիկ յանձնաժողովի հետ կապուած խնդրին:

# Հարցազրույց. Ինչ Միտումներ են Սպասուում Առաջիկայ 5 Տարիներին

ՌՈԶԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Lragir.am-ի գրուցակիցն է ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանեան գրասենեակի գործադիր ներկայացուցիչ Մովինար Յարութիանանը:

Տիկին Յարութիանան, 2019 թուականի տուեալներով՝ առանձին մարզերում վերցուած դեպոպուլիացիան (բնակչութեան պակասում) մեղմուել է: Միայն Լոռու մարզում է բնական յաւելաճը -7 եղել, մնացած խնդրահարոյց մարզերում, թկուզ փոքր, բայց աճ կա: Ի՞նչ միտումներ են ժողովրդագրական ոլորտում:

Մեր կանխատեսումներով՝ մոտ 2025-2026 թուականներից հանրապետութեան մակարդակով արդէն լինելու է դեպոպուլիացիա: Այսինքն՝ մահերը գերազանցելու են ծնունդներին: Եվ 2018 թվականից արդէն նկատելի էինք, որ մարզային կտրուածքով արդէն ունենք մարզեր, որտեղ ցուցանիշը բացասական էր, օրինակ, Լոռու մարզը: Սակայն կախուած է շատ հանգամանքների հետ: Նախքան անկախացումը, 1990 թուականին մենք տարեկան ունեցել ենք մոտ 80 հազար ծնունդ: Այս տարիների ընթացքում ծնունդների թիւը կրճատուել է, օրինակ, 2018-ին՝ 36 502 ծնունդ ենք ունեցել, իսկ 2019-ին՝ 36 131: Աւելի քան կիսով չափ կրճատուել են ծնունդները: Միւս կողմից, ծնելիութեան գումարային գործակիցն է կրճատուել: Եթէ նախկինում կինն իր կեանքի ընթացքում ունենում էր 2.6 երեխայ, ապա տարիներ են եղել, որ 1.3 է եղել այդ գործակիցը, այսինքն՝ 50 տոկոսով կրճատուել է ծնելիութիւնը: Այս վերջին տարիներին կայունացել է, մօտ 1.57 է այդ գործակիցը, բայց պարզ վերարտադրութիւնն ապահովելու համար 2.1 պէտք է լինի:

Ինչ վերաբերում է բնական յաւելաճին, 1990 թուականին ունեցել ենք 59 600 տարբերութիւն մահերի եւ ծնունդների: Այսինքն՝ տարեկան մօտ 60 հազար դրական աճ ենք ունեցել: 2018 թուականին բնական յաւելաճը եղել է 10 900, իսկ 2019-ին՝ 9 879: Այսինքն՝ կարող ենք ասել, որ բնական յաւելաճը մօտ 6 անգամ կրճատուել է: Եւ մեր կանխատեսումները ցոյց են տալիս, որ հանրապետութեան մակարդակով այս դրական ցուցանիշը մի 5-6 տարի անց դառնալու է բացասական, որովհետեւ վերարտադրողական տարիք են մտնում նաեւ 2000-2001 թուականներին ծնուած երեխաները, երբ ծնելիութեան գումարային գործակիցը 1.3 է եղել: Այն ժամանակ մենք տարեկան 32 000 ծնունդ ենք ունեցել: Իրենց կէսն արտագաղթում է, միւս կէսը զոյգ չի գտնում, որ ամուսնանայ, շատ քիչ ծնողական բազա ենք ունենալու, հետեւ աբար, ծնելիութիւնը նվազելու է: Նոյնիսկ, եթէ ծնելիութեան մակարդակը բարձրանայ էլ, մենք չենք կարողանալու պահել այս բնական յաւելաճը:

Բայց, միւս կողմից, պէտք է ասել, որ կանխատեսումները մնում են կանխատեսումներ: ՄԱԿ-ի կանխատեսման մեթոդաբանութիւնը եւ նոր կառավարութեան ծրագրի տեսլականը մեթոդաբանօրէն համեմատելի չեն: Մեր կանխատեսումներն իրականացում են հինգ

տարուայ կտրուածքով, նայում ենք վերջին հինգ տարիներին ժողովրդագրական հիմնական ինդիկատորները՝ ծնելիութիւն մահացութիւն, միգրացիա եւ այն: Եւ դա համեմատում ենք նմանատիպ իրավիճակ ունեցող երկրների հետ, տեսնում ենք այնտեղ ինչ միտումներ են գրանցուած եւ այդպէս պրոյեկտում ենք ապագայի վրայ:

Այսինքն՝ հնարաւոր է վատտեսակական կանխատեսումները չիրականանան, եթէ կառավարութիւնը քայլեր ձեռնարկի:

Եթէ երկրում փոխվում է իրավիճակ, եթէ հաշուարկների մէջ բաղադրիչ է աւելանում, պակասում կամ երկիրն էֆեկտիւ ծրագրեր, քաղաքականութիւն է սկսում իրականացնել, այդ ամէնը կարող է բերել նրան, որ, կոպիտ ասած, մեր կանխատեսումները սխալ դուրս գան:

Հայաստանում այս տարուայ կէսից ժողովրդագրական իրավիճակի բարելաւմանն ուղղուած ծրագ-




րեր են մեկնարկելու, դրանք կարող են փոխել այս կանխատեսումները:

Այս պահին դժուար է ասել, որովհետեւ մենք պէտք է տեսնենք այդ ամբողջական ռազմավարութիւնը, թէ ինչ ծրագրեր, ինչ ժամկէտներ ու ռեսուրսներ կան, արդեօք շարունակականութիւնը կը պահպանուի, թէ ոչ: Սրանք այն ծրագրերն են, որ եթէ բարեփոխումներ են իրականացում, աւելի լաւ է մի քիչ պակաս ամբիցիոզ լինեն, բայց շարունակականութիւն ապահովեն, որ երիտասարդները վստահ լինեն՝ եթէ ընտանիք կազ-

մեն, ունենալու են եւ բնակարանային պայմանների բարելաւում, եւ երեխայի նպաստ, եւ միանուագ նպաստ եւ այլն: Այդ փոփոխութիւնների մէջ կարեւորը սա է: Եւ կախուած է նրանից, թէ մենք քանի գործօնի վրայ հիմնուած համապարփակ ռազմավարութիւն ու ծրագրեր կիրականացնենք, որովհետեւ եթէ միայն մէկ գործօնի վրայ աշխատենք, օրինակ, նպաստները բարձրացնենք, դա էֆեկտիւ չի լինելու, աշխարհի փորձն այդ

Շար.ը էջ 16

  
 ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION  
 ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱԵՐՍԻՐԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
 Cordially invites you to  
*Spring Brunch*  
 Benefitting the  
**AEBU Scholarship Fund**  
*Empowering Our Youth for a Brighter Future*  
**Sunday**  
**March 22, 2020**  
 Starting at 10:30 am  
**AEBU CENTER**  
 1060 North Allen Avenue  
 Pasadena, CA 91104  
 To Reserve your tickets please  
**Call 626•344•7321**  
 OR  
**Text 818•281•0351**  
 Donation \$50

# Սուրեն Խուդանեանի Յիշատակին

Չորեքշաբթի, Փետրուար 19-ին կատարուեցաւ ԸՆԿ. Սուրեն Խուդանեանի հուղարկաւորութիւնն ու քաղուճը մեծ թիով հարազատներու, բարեկամներու եւ կուսակցական ընկերներու ներկայութեան:

«Ֆորթես Լոն» գերեզմանատան մէջ՝ Զնչակեան կարմիր դրօշով ծածկուած դագաղին առջեւ դամբանական խօսեցաւ ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ ԸՆԿ. Տօքթ. Զամբիկ Սարաքեան, վեր առնելով Սուրեն Խուդանեանի կեանքի ճանապարհը եւ ազգային, հասարակական ու կուսակցական երկարամեայ բեղուն գործունէութիւնը՝ Զայաստանէն սկսեալ մինչեւ Ամերիկա: Ապա, «Տուր Ձեռքդ ԸՆԿեր» երգով ընկերոջ մարմինը յանձնուեցաւ հողին:

Գոգեճաշի ընթացքին Զնչակեան շրջանակի եւ տարբեր միաւորներու անունով ելոյթ ունեցաւ ընկեր Գարիէլ Մոլոյեան:

Ստորեւ՝ Սուրեն Խուդանեանի կենսագրական գիծերը, որ ընտանիքի անդամներուն անունով ընթերցուեցաւ հանգուցեալի բրոջ կողմէ՝ եկեղեցական արարողութեան ընթացքին:

## Սիրելի բարեկամներ, հարազատներ եւ ընկերներ

Սուրեն Խուդանեանը ծնուել է 1952 թուին Իրանի Ուրումիա քաղաքում, միջնակարգ կրթութիւնը ստացաւ է նոյն քաղաքի Ֆիրցուսի անունան միջնակարգ դպրոցում: 1971 թուին ընդունուել է Թեհրանի տնտեսագիտական ինստիտուտ: Տոգորուած հայեցի դաստիարակութեամբ, համոզուած ազգային ու համամարդկային հայրենատենչ գաղափարներով կիսատ թողնելով Յրդ կուրսի դասընթացները, ընտանիքի հետ միասին հայրենադարձուում է Մայր Հայաստան: Հայրենիքում ուսումը շարունակուում է Երեւանի Պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում եւ գերազանց աւարտելով գործուղուում է Հոկտեմբերեան քաղաքի որպէս ֆինանսի տեսուչ եւ յետոյ բաժնի վարիչ:

1980 թուին ամուսնանում է Ռուզաննա Դողրամաջեանի հետ այդ հիասքանչ գոյզը ունենում եւ 3 առու գաւակներ: Սարմենը, Տիգրանը եւ Լեւոնը:

Անսաման սիրոյ եւ ուշադրութեան ներքոյ գաւակները դաստիարակուում են բարեկիրթ եւ հայեցի: Այժմ Սուրեն Խուդանեանը ունի 4 թոռնիկներ, Սուրենը եւ Սոֆիկը, Մարիելան եւ Դաւիթ Խուդանեանները:

Այդ ընթացքում միաժամանակ նա սովորում է Մարքսի անունան միջնակարգ յարաբերութիւնների ջակուլտետում, 1991 թուին ընտրուում է Արմաւիր քղաքի ֆինբաժնի վարիչ:

1996 թուին ընտրուում է Արմաւիր քաղաքի համայնքի աւագանի: 1998 թուին յաջողութեամբ աւարտում եւ Երեւանի Ամբրիկեան համալսարանի դեկանար կադրերի պատրաստման դասընթացները:

1996-2003 թուին Սուրենը եղել է Արմաւիրի գանձապետ բաժանմունքի պետը:

2003 թուին հանգամանքների բերումով նա մեկնում է ԱՄՆ:

Միացեալ Նահանգներում չնայած բազմաթիւ դժուարութիւններու իր աշխատասիրութեամբ եւ հաստատակամութեամբ ստանում է ամերիկեան չափանիշերով գիտելիքներ եւ մասնագիտութիւն եւ աշխատում է տարբեր հիմնարկութիւններում որպէս աւագ հաշուապահ եւ տնտեսագէտ:

Ակտիւօրէն մասնակցում էր Լոս Անճելոսի հայ գաղութի հասարակական, հայրենասիրական միջոցառումներին: 1994 թուից նա Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան անդամ էր:

Զգալի է Սուրենի անհատաւոր կորուստը իրեն համար այդքան սիրելի կուսակցութեան եւ կուսակցութեան ընկերների համար քանզի մեծ էր իր ներդրումը կազմակերպչական հարցերում:



Նա «Մասիս» շաբաթաթերթի մէջ հանդէս էր գալիս քաղաքական վերլուծման յոդուածներով:

Սուրենը իր մահկանացուն կնքեց Փետրուարի 13ին Կլենտոն քաղաքում, չարաբաստիկ հիւանդութեան պատճառով: Այսօր բոլորս պարում ենք կորստեան մեծ վիշտը մեր սիրելի Սուրենին: Անզուգական մի անձնաւորութիւն, անմնացորդ նուիրումով մի գաւակ, ամուսին, հայր, եղբայր, ընկեր եւ բառիս ամենալայն իմաստով ուրիշի հոգսով ապրող մի մարդ: Մի մարդ ում մէջ ամփոփուած էր բարութիւնը, խաղաղութիւնը եւ դիմացինին հասկանալու արուեստը: Դաժան մահը մեզանից խլեց նրան, յանկարծակի եւ անժամանակ, բառերը անզօր են բնութագրել կորստեան ցաւի չափը ընտանիքի եւ հարազատների համար:

Հայաստանից Սուրենի աւագ հարսի Չերմ նամակը, որը յարգանքի, սիրոյ, երախտագիտութեան եւ ափսոսանքի խօսքեր են, աւարտում է այս նախադասութեամբ. «Պապ ջան քո առաքելութիւնը այսքանով դեռ չի աւարտուում: Մենք վստահ ենք, որ քո «Մեծ մարդ» տեսակով կը լինես արդար ու ազնիւ բարեխօս մեր Տէր Աստծոյ առաջ քո կնոջ՝ գաւակների եւ թոռների համար»:

Իսկ 8 ամեայ աւագ թոռնիկ Սուրեն Խոդանեանը պապիկին նուիրում է այս բնաստեղծութիւնը:

## Պապիկիս

Ես Սուրեն եմ Խոդանեանը Ու հպարտ եմ որ կրում եմ իմ «Մեծ» պապի լաւ անունը:

Քո անունը Պապ ջան՝ ունի ուժեղութեան, խիզախութեան խորհուրդ իր մէջ

Դու էլ մարդ ես այս տեսակի:

Ես էլ կ'ուզեմ լինել քեզ պէ՛ ուժեղ ազնիւ, սիրող, ներող խաղաղութեան խորհրդանիշ Կ'ուզեմ հպարտ լինես դու ինձանով

Թէկուզ հեռուից, օրհնես, սիրես, լինես կողքիս Զեզ շատ սիրող աւագ թոռնիկ

# Ազգային Ձարթօնքի Նորագոյն Էջը (Ղարաբաղեան Շարժման 32-Ամեակին Առիթով)

ԱԻԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ

20 փետրուար 1988-ին էր, որ Ստեփանակերտի մէջ հրապարակուած պատմական որոշում մը, ահազանգը հնչեցուց հայոց ազգային զարթօնքի նորագոյն հանգրուանին: Լեւոնային Ղարաբաղի ինքնավար Մարզի ժողովրդական պատգամաւորները, իրենց խորհուրդի արտահերթ նստաշրջանին, հրապարակեցին յայտարարութիւն մը, որ եթէ հայկական կողմին համար, տարիներու ընթացքին ակնակառուց սպասուած երազ մըն էր, Պաքուի համար կտրականապէս անընդունելի քայլ, ընդհանրական առումով՝ համարձակ նախաձեռնութիւն, ապա՝ իրողական գետնի վրայ՝ անթեղուած հակամարտութեան մը վերաբերեալ կայծը հան դիտարկ: Որոշումը կ'առաջադրէր նշեալ հայաբնակ ու պատմականօրէն հայապատկան ինքնավար մարզը Ատրպէյճանի հակաշիռէն դուրս բերելով՝ միացնել Խորհրդային Հայաստանի Հանրապետութեան:

Հոն կը կարդանք. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատաւորների ցանկութիւններին, խնդրել Ատրպէյճանական ԽՍՀ Գերագոյն Խորհրդին ու Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդին խորն ըմբռնման զգացում դրսեւորել Լեւոնային Ղարաբաղի հայ բնակչութեան իրաւունքները եւ լուծել ԼՂԻՄ-ը Ատրպէյճանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ կազմ յանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀ Գերագոյն Խորհուրդի առջեւ՝ ԼՂԻՄ-ը Ատրպէյճանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ յանձնելու հարցի դրական լուծմանը»:

Սահմանադրական, օրինական եւ քաղաքակիրթ սոյն քայլը, պայթեցուց մինչ այդ կոծկուած պալար մը՝ վերածուելու համար արիւնալի հակամարտութեան եւ աւելնալով միջազգայնօրէն կնճռոտ հարցերու երկար շարքին: Ի հարկէ, այս ցնցիչ զարգացումը կը պատահէր Խ. Միութեան ներս սկսած ժողովրդավարութեան եւ վերակառուցման շարժումին համապատկերին վրայ, երբ մարդիկ հետզհետէ կը սկսէին արտայայտուել աւելի ազատօրէն եւ ընկերային-քաղաքական կեանքը կը սկսէր ընթանալ նոր ճանապարհով:

32 տարի առաջ անհնար էր գուշակել, որ այս հարցը պիտի ծաւալէր այսքան լայն տարողութեամբ եւ տեւէր տասնամեակներ շարունակ՝ անոր հանգուցալուծումը մնալով երբեք մերթ ուղմապէս կանաչանալու վրայ, ստիպ բանակցութեանց սեղաններուն շուրջ, երբեմն՝ կիսաժպիտ երկխօսութեամբ, յաճախ՝ սպառնալուսն ոգիով: Եւ 32 տարիներու ընթացքին, ինչքան արիւն ու մեղան հոսեցաւ, քանիք քանիք «բարի» միջնորդներ յայտնուեցան՝ հակամարտութիւնը մնալու համար հոն՝ ուր որ էր 12 Մայիս 1994-ին, երբ ռազմական գետնի վրայ, Պաքու ընկրկած եւ լախտի զգետնից հարուած ստացած, կանխելու համար նորանոր կորուստներ, գինադադար կը պաղատէր Ղարաբաղի իշխանութիւններէն, Հայաստանի Հանրապետութեանէն եւ հայկական զինուժէն: 32 տարի առաջ էր, երբ վերաբռնկեցաւ արցախեան հրդեհը՝ ակամայից յիշեցնելով 1905-ի եւ 1918-1920 թուականներու հայ-թաթար-



րական կատաղի ու զոհաշատ կռիւները:

Անշուշտ, անկարելի է սեղմ տողերով անդրադառնալ անցած 32 տարուան վերիվայրուամերուն, խճճուած ու բարդ եղելութիւններուն, միջազգային եւ շրջանային ազդու լծակներուն եւ շահերուն, քաղաքական-տնտեսական սուր բախումներուն: Մեզի հետաքրքրողը, առաջին հերթին, զարաբաղեան շարժման ունեցած ազգային-բարոյական գործօնն է, որ հիմնովին փոխեց հայ կեանքը, հայ մարդու կրաւորական կարծրատիպը:

Ի սկզբանէ իսկ ակնբախ էր, որ հարցը միայն արցախահայուցութեամբ չէր պարփակուել: Նոյն իսկ՝ Երեւանի քաղաքականութեամբ եւս: Այլեւ՝ ան ունէր եւ ունի համազգային բնոյթ: Ան մնաց ու կը մնայ սեւեռակէտը հանուր հայութեան: Արցախեան պոռթկումը կարծէք եղաւ զօրաշարժը ազգային նորագոյն զարթօնքի: Խթանը՝ զգաստացման եւ սթափութեան:

Ինչ հրաշալի պահեր էին 1988-ի փետրուարեան միլիոնանոց ցուցերը, ուսանողութեան եւ երիտասարդութեան շարան-շարան երթերը: Զօր ու գիշեր, ձիւնի ու բորանի մէջ ընթացող նստացուցերը: Ազգը դարձած էր միաբնուցեց, միակամ եւ միաշունչ Օփերայի հրապարակին վրայ (աւելի ուշ կոչուեցաւ Ազատութեան հրապարակ): Մարդիկ ուսընդուս, փաղանգ-փաղանգ, կուշտ-կուշտի կ'ուղղուէին հրապարակ՝ իրենց միասնականութիւնը յայտնելու արցախեան նախաձեռնութեան: Ժողովուրդը կոհակ-կոհակ կ'ալեկոծէր ի տես աննախադէպ հաւաքներու. գրեթէ աներեւակայելի: Անհրաժեշտ էր անյապաղ փոխել Ղարաբաղի կարգավիճակը: Սրբագրել պատմութեան ամօթի խարանդ:

Աստեղային օրեր ապրեցաւ հայութիւնը 32 տարի առաջ, երբ տարբեր վայրերու եւ քաղաքներու մէջ, գանազան առիթներով ու բեմերով կը կրկնէր՝ «Միացու՛մ, միացու՛մ», «Ղարաբաղը Մերն է»: Եւ ահա Ստեփանակերտէն այդ օրերուն հնչեց շարժման դեկավարներէն՝ Հեն րիկ Պողոսեանի կարգախօսը՝ «Ոչ մի ըրպէ չենք դադարելու պայքարելուց, ոչ մի վայրկեան չենք կասկածուում յաղթանակից»:

արդէն բանակային վաշտերու, կազմակերպեալ զինուորական ստորաբաժանումներու կտրուկ գործողութիւններով: Երբ այս փուլը իր լրումին հասաւ Արցախի կատարեալ յաղթանակով, անկէ ետք հարցին լուծումը վստահուեցաւ քաղաքական-դիւանագիտական ոլորտին:

Ահա այստեղ կը գտնուի հարցին վերջնական լուծման մոզական բանալին:

Տարիներ ընթացող բանակցութիւնները կը նմանին ոլորապտոյտ տեղաշարժի: Քաղաքական լուծումը տակաւին հեռու կը թուի ըլլալ: Պարտեալը երբ հանդէս կու գայ յաղթականի յոխորտանքով եւ ցանկութիւն չունի ըմբռնելու թէ

### Ս. Գրիգոր Լուսաւորիչ Շաբաթօրեայ Վարժարանը Տօնեց Տրնդեզը



«Երթալ Ձմեռը, գայ Գարունը, երթալ Հինը, գայ Նորը, երթալ Չարը ու գայ՝ Բարին... Թող զարնէ տհօլը ու փչէ գուռնան»: Տնօրէն Նորայր Տատուրեանի այս խօսքերով սկսաւ Փասատենա քաղաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ շաբաթօրեայ վարժարանի Տրնդեզի աւանդական խառոյկահանդէսը:

15 փետրուար Շաբաթ օր տրամադրութիւնը տօնկան էր շաբաթօրեայ վարժարանի մէջ: Բակի մէջ թէ՛ աշակերտներու եւ թէ՛ ծնողներու մէջ կար գարնանամուտի այս գուարճանքի ժպտադէմ ակնկալութիւն: Տօնակատարութեան մաս-

նակցութիւն բերած էին նաեւ բազմաթիւ մեծ հայրեր ու մեծ մայրեր:

Ապա բոցավառեցաւ հանդէսը երբ սկսաւ հնչել ազգային երգերու աշխոյժ եւ մեծածախ երաժշտութիւնը, շնորհիւ հայրենի երեք երաժշտներու: Ու անմիջապէս տաքարիւն աշակերտներու առաջին խումբ մը, աւելի համարձակները, սկսան կրակի վրային թռչիլ: Աւելի փոքրիկները, ո՛չ նուազ խիզախ, ուսուցչուհիներու ձեռքէն բռնած վայելեցին նոյն «վտանքաւոր» հանդէսը: Ապա ամբողջ դպրոցը պարեց լոյսի, յոյսի եւ սիրոյ մեծ շուրջպարը:

խնդրին պէտք է դիւանագիտական լուծում, տազնապը կը մնայ հոն՝ ուր որ է: Իսկ վերջերս, Փաշինեան-Ալիեւ դէմ առ դէմ հրապարակային բանավէճի ժամանակ, Հայաստանի վարչապետին դիպուկ խօսքը, որ եթէ Պաքու հարցին լուծումը կը տեսնէ պատերազմի տարբերակով, ապա հարցը լուծուած պէտք է համարել, կը նշանակէ՝ թէ իրօք, ինչ պէս որոշուած էր 1988-ին՝ հայեր ոչ մէկ ըրոպէ պիտի դադրին պայքարելէ եւ արդէն անկասկածօրէն հարցը լուծուած է արցախահայութեան յաղթանակով:

Իսկ ինչո՞ւ 1988-ի որոշումը բնորոշեցինք ազգային գարթօնքի նորագոյն էջը:

Եկէք երեւոյթը դնենք մեր վերջին հարիւրամեայ պատմութեան հոլովոյթին մէջ: 100 տարուան ընթացքին մեր ազգային կեանքը ապրեցաւ մակընթացութեան եւ տեղատուութեան հանգրուաններ: Մեծ Եղեռնի ժամանակ, ճիւղ թալաթ փաշային երբ երեսփոխան Վարդգէս կը դիմէ

բուռնօրէն բողոքելու համընդհանուր կոտորածներուն դէմ, ճիւղը ցինիկաբար կը պատասխանէ՝ այնպէս պիտի հարուածենք հայերը, որ 50 տարի մոռնան բարենորոգումներ թէ ինքնավարութիւն. մէկ խօսքով՝ 50 տարի չկրնանք ուշքի գալ:

1915-ի տեղատուութենէն 50 տարի ետք՝ Եղեռնի յիսնամեակին հայր ապրեցաւ իր մակընթացութիւնը՝ ազգային գարթօնքը՝ պայքարի նոր աւիւնով: Որոշ տեղատուութենէ ետք՝ 1975-ին՝ աշխարհի տարբեր վայրերու մէջ զինեալ պայքարով ապրեցաւ մարտական մակընթացութիւն մը՝ երիտասարդական գարթօնքով: 1980-ականներուն դարձեալ տեղատուութենէ ետք՝ 1988-ին՝ ուշադրութիւնները կեդրոնացան Ղարաբաղի ուղղութեամբ՝ որովհետեւ այս անգամ կ'արձանագրուէր նոր մակընթացութիւն մը՝ դարաբաղեան շարժումով: Հետեւաբար, Արցախէն հնչեց ազգային նորագոյն գարթօնքին շեփոքը՝ ասկէ 32 տարի առաջ:

# S.S. Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոս-Պատրիարք Հայոց Թուրքիոյ 1916-1917 Թուրք Պետութեան Խայտառակ Կանոնագիրը

ԴՈՎՏ. ԶՄԻՆ Ա. ՔՅՆՅ.  
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

## Սահակ Կաթողիկոս-Պատրիարք

Երբ 1916 Յուլիս 28-ի պաշտօնանկութեան գիրը կը յանձնուէր Կ. Պոլսոյ Պատրիարք Զաւէն Արքեպիսկոպոս Տ. Եղիայեանի, Երուսաղէմի մէջ ԱՏՏԵՍ ձեռնարկ փաշաանձնական տեսակցութիւն մը կ'ուսնենար Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսին հետ: Ձեռնարկ կ'ուզէր առանձինն տեսակցիլ Կաթողիկոսին հետ զգուշացնելով որ «չենք ուզեր որ մեր թշնամիին հպատակ եղող Կաթողիկոս մը մեր տէրութեան սահմաններուն մէջ ապրող հայերուն հոգեւոր պետը ըլլայ», եւ թէ կառավարութիւնը որոշած էր թրքահայոց հոգեւոր կապը խզել էջմիրածնի հետ: Ձեռնարկ ուզած էր «իբրեւ բարեկամ» կեդրոնի կառավարութեան որոշման վրայ այս նոր պաշտօնը յանձնել Սահակ Կաթողիկոսին, «քանի որ արդէն Սիւսի Կաթողիկոսն էջ ներկայիս»:



լիս 30-ին, կ'անտեսէր Օրմանեանի ներկայութիւնը որ Երուսաղէմ կը մնար իր պարտականութեանց գլուխը: Անձամբ Կաթողիկոսին մօտ երթալով «ցաւ կը յայտնէր որ իրմէ գաղտնի պահել ուզած էր», եւ միաբանական ժողով գումարած առանց զինք տեղեակ պահելու իր պաշտօնական դիրքին բերումով, որուն Կաթողիկոսին պատասխանը եղած է «սխալմունք մըն էր եղաւ», գոր Օրմանեան «կամաւոր սխալմունք» որակած է:

Անկանկալի եկած, Սահակ Կաթողիկոս իր «ծերութիւնը պատրուակ ընելով կը խնդրէր որ այդ ծանր լուծը իր տկար ուսերուն վրայ չդրուէր», որուն ի պատասխան ձեռնարկ խորամանկօրէն կ'ըսէր թէ «Ձեր ժողովուրդի հալածանքը պիտի դադարէր», եւ Կաթողիկոսն ալ ժամանակ կը խնդրէր: Ձեռնարկ կ'աւելցնէր ըսելով որ «միայն թէ առ այժմ այս առաջարկը պետական գաղտնիք մը ըլլալով կը սպասուի վերջնական որոշման»: Սահակ Կաթողիկոս, յետ խորհրդակցութեան իր հետ եղող Եղիշէ Կարոյեան, Պետրոս Սարաճեան եւ Գիւրո Մխիթարեան եպիսկոպոսներուն հետ, կ'որոշէր ընդունիլ նոր պաշտօնը «ի սէր ժողովուրդին»:

Օրմանեան յարգելով Սահակ Կաթողիկոսի առժամեայ դիրքը երկրորդ անգամ եւս տեսակցած է իր հետ եւ քաջալերած զինք որ «հայ ազգութեան կերպով մը իր գոյութիւնը ճանչցուած ըլլալուն փաստ մըն է եղածը, եւ զգոյշ ըլլալ պէտք է որ իւր անունը ատելի չդարձնէ եւ ազգին մէջ վատ յիշատակ մը չթողու»: Օրմանեան Սրբազանի գլխաւոր մտահոգութիւնը նորեւտեմ կանոնագրութիւնն էր թուրք պետութեան կողմէ գրուած որուն մասին յաւելեալ բացատրութիւն կուտանք ստորեւ: Այսուհանդերձ, Սահակ Կաթողիկոս-Պատրիարք պարտադրուած էր գոնէ ձեւականօրէն ընդունիլ եւ հաստատել Կանոնագիրը գոր հայերէնի թարգմանելով 1917-ին կը հրատարակէր վանքի տպարանէն:

Երուսաղէմի մէջ երկու տարիներէ ի վեր արդէն պաշտօնի վրայ էր Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան որպէս ներքին գործերու վարիչ՝ նշանակուած Կ. Պոլսոյ Պատրիարքութեանէն, եւ երբ Սահակ Կաթողիկոս իր եպիսկոպոսներով Երուսաղէմ կը հասնէր, նոր կացութիւնը «գաղտնի կը պահէին» Օրմանեանէն, «գիտնալով որ վարիչը ես եմ, եւ զիս գանց կ'ընէր Սահակ Կաթողիկոս», ինչպէս կը գրէր իր «Խոհք եւ Խօսք»ին մէջ: Սոյն գանցառութիւնը ակնբերել կը դարձնէր Խապայեանի եւ Օրմանեանի միջեւ արդէն իսկ գոյութիւն ունեցող անհանդուրժողութիւնը: 1916 յուլիս 29-ին արդարութեան գործոց նախարարութեան պաշտօնական հեռագիրը կը հասնէր, միայն մէկ օր ետք Զաւէն Պատրիարքի պաշտօնանկութեան, եւ «ինքն ակամայ կ'ընդունէր պաշտօնը եւ Երուսաղէմի պատրիարքարանը կը փոխադրուէր»:

## Օրմանեանի Դիրքը

Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան որպէս ակնանտես բոլորովին այլ կերպ կը ներկայացնէր Սահակ Կաթողիկոսին դիրքն իր նոր պաշտօնին նկատմամբ: Օրմանեան կը հաստատէր որ Խապայեան «իսկոյն իւր շնորհակալութիւնը կը հեռագրէր», եւ առանց վարանումի, առանց խորհրդակցութեան, առանց բացատրութիւն պահանջելու «յանձնառու կ'ըլլար» իր պաշտօնին: Եւ երբ Կաթողիկոս-Պատրիարքը առաջին միաբանական ժողովը կը հրաւիրէր յու-

## Գահակալութիւնը

Որքան որ յերիւրածոյ եւ բռնադատեալ ըլլար Կաթողիկոսին նոր դիրքն ու պաշտօնը, Սահակ Կաթողիկոս-Պատրիարքի գահակալութիւնը այդուհանդերձ տեղի կ'ունենար եկեղեցական կարգով եւ կարգադրութեամբ Օրմանեան Սրբազանի, որով նաեւ վերջ կը գտնէր Օրմանեանի պաշտօնը իբրեւ լիազօր պատուիրակ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան: Սակայն փոխանցումը հազիւ կատարուած, 1917 օգոստոս 8-ին, ներքին գործոց նախարարութեան հրահանգ կը հասնէր որ Օրմանեան երեք օրէն պէտք էր Երուսաղէմէն Դամասկոս փոխադրուէր: Կաթողիկոսի միջնորդութեամբ Օրմանեանի տրուած հրահանգը յետո կը կոչուէր ու ան կը մնար Երուսաղէմ:

## Անփառունակ Վախճան

Սահակ Կաթողիկոս-Պատրիարքի դիրքը թուրքերը բերին, եւ կարճատեւ մը ետք ալ թուրքերը գահընկէց ըրին զինք: Կաթողիկոսին աննախ եւ անկանոն պաշտօնը Երուսաղէմի մէջ տեւեց միայն 15 ամիս, 1916 օգոստոսէն 1917 նոյեմբեր, երբ Բրիտանական բանակը գրաւեց Պաղեստինն ու Երուսաղէ-

մը, եւ թուրք բանակը դէպի հիւսիս նահանջեց, իրեն հետ տանելով Երուսաղէմի հոգեւոր պետերը՝ Խապայեանն ու Օրմանեանը, իրենց սինոդական եպիսկոպոսներով, որոնք բոլորը առժամաբար փոխադրուեցան Դամասկոս: Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը իր նախկին դիրքն ու հեղինակութիւնը ստացաւ Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեանի Պատրիարք ընտրութեամբը չորս տարի ետք:

## Ապօրէն Կանոնագիր

Թուրք պետութեան Հայ Եկեղեցւոյ նուիրապետութեան ապօրինի միջամտութեան գործիքն ու հետեւանքն էր նոյնքան ապօրինի «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան» կոչուած օրինագիծը որուն միջոցաւ Տ.Տ. Սահակ Բ. Խապայեան Կիլիկիոյ Կաթողիկոսը բռնի կը ստանձնէր իր նորեւտեմ պաշտօնը: Կաթողիկոսը կը թողուր Սիւսի իր Աթոռը եւ Երուսաղէմ «աքսորուելով» կը դառնար Կաթողիկոս-Պատրիարք, երբ նոյն ատեն վերջ կը գտնէր նաեւ 1863 թուականի «Ազգային Սահմանադրութիւնը», եւ պահ մըն ալ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը կը դադարէր գոյութիւն ունենալէ:

Նոյն տարիներուն Մաղաքիա Օրմանեան նախկին Պատրիարք, որպէս լիազօր վարիչ Երուսաղէմի ներքին գործոց, հոն գործուողուած էր Կ. Պոլսոյ Պատրիարքութեան Ազգային Վարչութեան կողմէ: Իր դատողութեամբ նման պարտադիր քայլ մը պետութեան միջամտութեամբ «Հայ Եկեղեցւոյ պաշտամանց ու հաստատութեանց, հայ կրօնքին ինքնութեան ու պահանջին դէմ ոճիր մըն է», որ կը ջնջէր Սուլթանական կայսրութեան հրովարտակով ճանչցուած եւ հաստատուած հայ հոգեւոր եւ ազգային հաստատութիւնը իր հիմերէն:

Կանոնագիր կոչուածը 1916 յուլիս 19 թուականը կը կրէր ու կազմուած էր յառաջաբանէ մը, երեք գլուխներէ, եւ 39 յօդուածներէ, ստորագրութեամբ կայսեր՝ Մէհմէտ Բեշտի, վեց նախարարներու, եպարքոսին եւ շէյխ-իւլ-իսլամին: Կանոնագիրը կը պարտադրէր թրքահայ չորս հոգեւոր կեդրոններու - Սիւսի, Կ. Պոլսոյ, Երուսաղէմի, Աղթամարի - միացումը եւ անոնց խզումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն բան մը որ եկեղեցական կանոններով հաստատուած նուիրապետութեանց բացարձակ բռնաբարումը կ'ըլլար՝ քաղաքական իշխանութեանց կողմէ:

Մինչդեռ Աթոռներու ծագումն ու գոյութիւնը միայն եկեղեցական կանոններով հաստատուած են, եւ միայն անոնցմով կրնան բարեփոխուիլ, Օրմանեան Պատրիարք իրաւացի կերպով մատնանշած է թէ «հոգեւորական իրաւասութիւնը ո՛չ քաղաքական իշխանութեան կը բխի, եւ ո՛չ ալ քաղաքական իշխա-

նութիւնը կրնայ տալ, տուած ալ չէ որ ետ առնէ»: Առաջին յօդուածն իսկ չորս Աթոռները կը միացնէր ու Մայր Աթոռի իրաւասութիւնը կը ջնջէր եւ հոգեւոր պետը Երուսաղէմ կը հաստատէր, այնպէս որ թրքահայութեան կեդրոնը կայսերական մայրաքաղաքէն կը հեռանար եւ կարեւորութիւնն ալ կը նուազէր:

## Թրքատիպ Քայքայում

Կանոնագիր կոչուած խայտաբղէտ յօդուածներուն մէջ տիրող ոգին կ'արտայայտուէր հետեւեալ կէտերուն մէջ որոնք կը ջնջէին Հայ Եկեղեցւոյ ներքին դրութիւնը գայն վերածելով խիստ սահմանափակ երկու ժողովներու՝ ուղղակի ենթակայ պետական հակազուրկ: Անոնք էին «Հոգեւոր եւ Խառն ժողովները», որոնց ուժով ի սպառ կը ջնջուէին երեսփոխաններու ժողովն ու ժողովրդական քուէարկութիւնը: Նորեւտեմ ժողովներէն Հոգեւորը «հասարակութեան կրօնական գործերուն պիտի հսկէր», եւ Խառնը՝ «պատրիարքարանի անտուկին հասոյթները պիտի մատակարարէր»: Թեմակալ առաջնորդներ Հոգեւոր ժողովէն պիտի ընտրուէին եւ «տէրութեան կողմէ վաւերացուէին»: Կ. Պոլսոյ պարագային «տեղւոյն առաջնորդը պատրիարքական փոխանորդ պիտի ըլլար» փոխան ընտրեալ պատրիարքի:

Նորեւտեմ պաշտօնին կոչուած Կաթողիկոս-Պատրիարքը պետութիւնը ինք պիտի որոշէր ուզած անձը նշանակելով, առանց ձեւական ընտրութեան առիթ տալու, ինչպէս Խապայեան Կաթողիկոսի պարագային: Այս բոլորը խաբուսիկ եւ ժամանակաւոր էին, եւ մանաւանդ ԱՏՏԵՍ ձեռնարկ փաշայի անձնական ճիգը կը մատնէր կատարուած ապօրինութեան մէջ, «մօտիկ բարեկամը» ըլլալով Կաթողիկոսին, հոգ չէ թէ անկանոն Կանոնագիրը յօդուածով մը «ընտրութիւն» սահմանած էր: Այս տեսակ ապօրինի կանոնագրութիւն մը Խապայեանի կը պարտադրուէր առ ի գործադրութիւն:

## Անարժէք եւ վաղաժամ

Անպէս Կանոնագիրին անարժէք ըլլալը իսկոյն յայտնի կ'ըլլար անոր վաղաժամ վախճանով, թէ՛ Կանոնագիրը կ'անյետանար, եւ թէ՛ Կաթողիկոս-Պատրիարքի յերիւրածոյ պաշտօնը յօդա կը ցնդէր՝ Սահակ Կաթողիկոսի եւ սինոդականներու մեկնումով Երուսաղէմէն դէպի Դամասկոս: Երուսաղէմ կը մնար ու իր նախկին փառքին կը տիրանար, Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը՝ անգոյ, մինչ Աղթամար իր հետքը կը կորսնցնէր, եւ Սիւս շրջան մը թափառական մնալէ ետք ինքզինք կը գտնէր տասնամեակ մը ետք Լիբանանի մէջ: Այս բոլորը «շնորհիւ» տիրահաշտակ Կանոնագրին:


**Ջօրացիկը Օժանդակենք Փրկենք**

Syrian Armenian Relief Fund  
P.O. Box 1948  
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

# Ճանապարհագրութիւն Փշոտ Ճամբու Վրայ

ԲԱԳՐԱՏ ԷՍՐՈՒԳԵԱՆ



Տէրսիմի հայոց հայրենակցական միութեան հիմնադիր Միհրան Փրկիչ վերջերս ձեռնարկած է հրատարակչական աշխատութեան: Ընդհանրապէս այս անտեսուած գաւառի ապրումներով լեցուած մատենաշար մըն է իր հրատարակածները, որոնց մէջ բացառութիւն կազմող երկու գեղատիպ հատորներ եղան Կոմիտաս Վարդապետի գերմաներէն երգերու ձայնագրութիւնները եւ Հայաստանի պատմական քարտէզներու հաւաքածոն:

«Փրկիչ» հրատարակչատան մատենաշարի եօթներորդ հրատարակութիւնը նոյն ինքն իր Միհրան Փրկիչի գործունէութեան մօտ տասնամեայ ծանօթագրութիւնն է: Առաջին էջերու վրայ շատ համառօտ անցնելով իր մանկութեան եւ պատանութեան յուշերը, ան գիրքի կարեւոր մէկ մասը տրամադրած է հայրենակցական միութեան հիմնադրութեան դժուարին գործին: Ոմանց համար ծպտեալ, ոմանց համար ազգուած բացատրութիւններով բնութագրուած ժողովուրդը իրականութեան մէջ Միհրան Փրկիչի ընտանեկան պատմութիւնն է: Ան շատ տեղին դիտարկումով ուսումնասիրած է իր ժողովուրդի կրօնափոխ ըլլալու երեւոյթները, այդ ընթացքին տեղի տուած գործունէրը, այս բոլորին մէջ գինք շարժման մղող ազդակները:

Շատ պարզ ու հաղորդական պատմելաճ մը որդեգրած է Միհրան Փրկիչ, որու շնորհիւ ընթերցողը առանց վարանումի կրնայ գուշակել թէ ի՞նչ եղած է, ինչո՞ւ եղած է եւ ի՞նչ պէտք է ընել:

Դժբախտաբար Տէրսիմի յատկապէս ալ այսպէս յիշուած աշխարհագրական հատուածի ներքին մասերը գերծ մնացած են 1915ի աղէտէն եւ այդ իրողութեան վրայ ալ հիւսուած է բաւականին ումանութիւ պատմութիւն մը: Կասկած չկայ թէ այդ պատմութիւնը բնականաբար շատ հաճելի թուացած է բոլոր տէրսիմցիներուն, քանի որ իրենք այսպէսով հիւսած են այն պատումը, ըստ որու Տէրսիմի մէջ ցեղասպանութիւն չէ եղած, քանի որ տեղուցն ալեւի եւ զազա ժողովուրդները ինչպէս են իրենց հարեւան բարեկամ ժողովուրդը: Սակայն այս պատումը որքանով կը համապատասխանէ իրողութեան: Եթէ այդպէս է ինչո՞ւ համար Տէրսիմի մէջ ալ վերապրածները միշտ մեծ մայրիկներ են եւ ոչ մեծ հայրիկներ: Ինչո՞ւ համար այդ նոյն վերապրածները տարիներու ընթացքին ստիպուած եղած են իրենց հաւատքը ուրանալու: Բոլոր այս հարցումները իրենց պատասխանները կը գտնեն Միհրան Փրկիչի պատումին մէջ: Ան անշուշտ որ չուրանար տեղուցն զազաներու կամ քիւրտերու հայերու հետ ունեցած բարեկամական անցեալը: Բայց անդին կայ լուսաբանութեան կարօտ

բազմաթիւ երեւոյթներ եւս: Իսկ աւելի կարեւոր հանգամանքը այն է, թէ տէրսիմահայերուն վերայ յայտնութիւնը ի՞նչ տեսակ բեռ մը եւ պատասխանատուութիւն մը կը բերէ հայ ժողովուրդի ուսերուն:

Վահրամ Մաւեան իր պատմուածքներու հաւաքածոյի՝ «Ամէն Տեղ Հայ Կայ»-ի մէջ կը յիշէ կարեւոր ապրումներ, որոնք կը նկարագրուին «Ինչո՞ւ ալլամերժ էք հայերը» հարցումով: Ոչ հայուն մը բերնէն կը լսենք այս հարցումը, որուն պարտաւոր ենք համոզիչ բացատրութիւն գտնելու: Թերեւս ալ մենք չենք անդրադարձած նման ազգային յատկութեան: Մտքով իսկ չենք անցուած, թէ մենք իսկապէս ալ ալլամերժ ենք: Բայց հաւանականօրէն թուրք Ազգային Շարժում կուսակցութեան հայագրի հիմնադիր Ալիսայան թիւրքէջ ալ մտքով իսկ չէր անցներ, թէ երբ կ'ըսէ «Թուրքի միակ բարեկամը թուրքն է», նոյն նախադասութիւնը կարելի է կարգաւ «Թուրքը բոլորին թշնամի է» ձեւով եւս:

Ճիշդ է որ տէրսիմահայութիւնը այսօր երբ կը փորձէ իր նախնեաց արմատներուն վերադառնալ, գինք մերժող դարձեալ իր ազգակիցն է: Միհրան Փրկիչ շատ վառ օրինակներով կը պարզէ այս իրողութիւնը եւ ցոյց կու տայ թէ ինչ արգելքներով եւ խոչընդոտներով դէմ առ դէմ կը մնայ ալեւիացած հայը, երբ մկրտուելու համար կը դիմէ Պատրիարքարան:

Նշենք որ գիրքը Տիրան Լոք-մակէօզեանի կողմէ թարգմանուած է նաեւ արեւելահայերէնի եւ հրատարակուած երկլեզու ձեւով:

Խիստ գնահատելի այս հրատարակութեան թերեւս գլխաւոր թերացումը կը ներկայանայ հայերէն էջերու համար գործածուած տառաչափով: Դժուար ընթեռնելի այդ փոքր տառերը յուսանք կ'ուղղուին յաջորդ տպագրութիւններուն: Վերջապէս շատ կարեւոր նիւթի մը ակնարկող գիրք մըն է լոյս տեսածը, որուն մէջ հեղինակը ամենայն պարզութեամբ հանրութեան հետ կը կիսէ իր հայ ընկերային կեանքի մէջ ապրած յուսադրիչ եւ հիասթափեցնող գանձանք երեւոյթները: Կ'ողջունենք այս աշխատասիրութիւնը, որ իր խօսքը կ'ուղղէ մեր ներկայ կարեւոր խնդիրներէն մէկուն վերաբերեալ: «ԱԿՕՍ»

# ՀՀ Գլխաւոր Հիւպատոս Դեսպան Արմէն Բայբուրդեանի Այցը Արիզոնայի Նահանգ

Շարունակուած էջ 8-էն

րի մատուցման ոլորտներում, որոնցում Սքոթլենդը քաղաքը մեծ փորձառութիւն ունի: Հանդիպմանը ներկայ էին Սք. Աբգար եկեղեցու հովիւ տէր Զաքարիա Սարիբեկեանը, դոկտ. Սթիւեն Օվանեսօֆը եւ Բաֆֆի

Յակոբեանը: Արիզոնայի Սքոթլենդ քաղաքն ունի քառորդ միլիոն բնակիչ: Ամէն տարի քաղաքն հիւրընկալում է 9 մլն այցելու, ինչը տեղական զբօսաշրջութեան առաւելագոյն արդիւնաւէտ կառավարման հրաշալի օրինակ է:

# Ինչ Միտումներ Են Սպասուում

Շարունակուած էջ 6-էն

մասին է վկայում:

Մեզ մօտ մէկ այլ հետաքրքիր միտում է նկատուում՝ ամբողջ աշխարհում քաղաքային բնակավայրերում աւելի քիչ ծնունդներ են գրանցուում, քան գիղական: Գիղերում միշտ աւելի շատ են երեխաներ ունենում, բայց մեզ մօտ այս միտումը շեղուել է 2012 թուականից: Այսօր մեր գիղական բնակավայրերում 1.4 է ծնելիութեան գործակիցը, իսկ քաղաքայինը՝ 1.65: Մենք պէտք է նայենք, թէ որոնք են խնդիրներն ու պատճառները, գիղերում այլ են, քաղաքներում այլ: Կոնկրետ ՄԱԿ-ի բնակչութեան հիմնադրամի կողմից ի՞նչ քայլեր են արւում այս խնդիրները մեղմելու համար:

Նախ տարիներ շարունակ մենք այդ ահագնազը հնչեցնողներն ենք եղել: Մենք ունենք հետազոտական շատ լուրջ բազմ մի շարք ոլորտների վերաբերեալ: Մենք բերում ենք աշխարհի լաւագոյն փորձով քաղուած դասերը, որպէսզի չկրկնենք այն նոյն սխալները, որոնք արել են այլ երկրները: Միանշանակ լուծում չկայ ժողովրդագրական խնդիրներին, որովհետեւ այս խնդիրները որպէս կանոն շատ երկարաժամկէտ աշխատանք ու շատ ռեսուրսներ պահանջող են: Բայց կան երկրներ, որոնց յաջողուել է իրավիճակը բարելաւել որոշ սկզբունքների համադրութեան արդիւնքում: Մենք փորձում ենք խորհրդատուութիւն տրամադրել կառավարութեանը, թէ ինչպէս բոլոր գերատեսչութիւնները համատեղ միմիանց փոխարկող ծրագրեր իրականացնեն, որպէսզի համատեղ ջանքերով կարողանանք մարդկանց բարեկեցութիւնը հնա-

րաւորինս շուտ բարելաւել:

Մենք այս տարի անպտղութեան վերաբերեալ մեծ հետազոտութիւն ենք սկսում, քանի որ անպտղութիւնը լուրջ խնդիր է, իսկ մենք թարմացուած տուեալներ չունենք: Այս տարի արդիւնքները կ'ունենանք, որի հիման վրայ նոր քաղաքականութիւն կը մշակուի: Դա կը նպաստի, որպէսզի ապացուցեն լինեն ծրագրերն ու հենց մեր կարիքներից բխող: Օրինակ՝ հանրապետութեան մակարդակով, երբ նայում ենք մեր բնակչութեան կազմը, ապա 2018 թուականի տուեալներով 0-19 տարեկանների թւում տղաների թիւը շատ է 48 հազարով: Դա սեռով պայմանաւորուած չլիութեան արհեստական ընդհատման հետեւանք է: Տարեկան մօտ 1500 աղջիկ չի ծնւում, շեղուածութիւնը բարձր է: Միւս կողմից, եթէ մենք 20-40 տարեկան տղամարդկանց ու կանանց կոհորտն ենք վերցնում, որը գոյգերի ամենակատիւ վերարտադրական տարիքն է, այդտեղ տեսնում ենք, որ կանայք 40 հազարով աւելի են: Տղամարդիկ հիմնականում արտագաղթում են, եւ այս կանայք ու աղջիկները ընտանիք կազմելու լուրջ սահմանափակում ունեն:

Այս խնդիրը շատ խորքային շերտեր ունի, դրա համար պէտք է հասկանանք, թէ որն է խնդիրը, ինչ անենք, որ խնդիրները լուծենք: Անելիքները շատ-շատ են, բայց ես գտնում եմ, որ մենք ճիշտ ուղու վրայ ենք, որովհետեւ կառավարութիւնն իրօք ցուցաբերում է քաղաքական կամք, աւելին, մեծ ֆինանսական ռեսուրսներ է ներդնում եւ մեծ մոբիլիզացիա է կատարում, որպէսզի փուլ առ փուլ կարողանան խնդիրները լուծել:

Նիւ-եօրք Թայմզ պարբերականը Սքոթլենդի կենտրոնը բնորոշում է՝ իբրեւ «Մայամիի հարաւային ծովափի անապատային տարբերակ»: Սք. Աբգար հայկական եկեղեցին գտնւում է Սքոթլենդում եւ կառուցուել է 2009 թուականին:

Արիզոնայ կատարած այցի ընթացքում դեսպան Բայբուրդեանը հիւրընկալուեց նաեւ հանրայն Արիզոնայի պետական համալսարանի Ռուսական, Եւրասիական եւ Արեւելաեւրոպական ուսումնասիրութիւնների Մեյքլիքեան կենտրոնում: Այստեղ ՀՀ գլխաւոր հիւպատոսին ողջունեցին Մեյքլիքեան կենտրոնի խորհրդատուական մարմնի նախագահ Ռամոնա Լի Մեյքլիքեանը եւ նրա մայրը՝ Էմմա Օրջանեան Մեյքլիքեանը:

Կեդրոնը Մեյքլիքեան է անուանակոչուել 2007 թուականին հրամանատար Գրեգորի Մեյքլիքեանի եւ իր տիկնոջ՝ Էմմա Օրջանեան-Մեյքլիքեանի առատաձեռն նուիրատուութեան արդիւնքում:

Դեսպան Բայբուրդեանն այցելեց նաեւ Հայոց ցեղասպանութեան յուշարձան, որը գտնւում է Ուեսլի Բոլին յուշահամալիրում՝ Արիզոնայի նահանգային խորհրդարանի առջեւ:

Սուրբ Աբգար եկեղեցում տեղի ունեցաւ դեսպան Արմէն Բայբուրդեանի հանդիպումը Արիզոնայի հայ համայնքի հետ: ՀՀ գլխաւոր հիւպատոսը հանդէս եկաւ ծաւայուն ելոյթով, որում կարեւորեց համայն-

քի դերը Արիզոնայի եւ Հայաստանի միջեւ բազմաբնոյթ եւ բազմաոլորտ կապերի հաստատման առումով: Դեսպան Բայբուրդեանը համայնքին ներկայացրեց մայր հայրենիքում տեղի ունեցող խորքային փոփոխութիւնները, որոնց շնորհիւ Հայաստանը յայտնուել է միջազգային հանրութեան դրական ուշադրութեան կենտրոնում: Գլխաւոր հիւպատոսը նաեւ քննարկեց ՀՀ-ի տնտեսական միջավայրը, նպաստաւոր գործարար դաշտը եւ հեռանկարային ոլորտները, որոնք կարող են հայրենիքում գործունէութիւն ծաւալելու հիմք դառնալ: Նա նաեւ պատասխանեց ներկաների բազմաթիւ հարցերին:

Յայտագրի վերջում դեսպան Բայբուրդեանը բարձր գնահատեց եկեղեցու քահանայ տէր Զաքարիա Սարիբեկեանի ազգանուէր գործունէութիւնը եւ նրան յատուկ պատվոգիր յանձնեց:

Արիզոնան մեծութեամբ 6-րդ եւ բնակչութեան թուով 14-րդ նահանգն է ԱՄՆ-ում:

Նահանգի բնակչութիւնը կազմում է 7,2 մլն: Արիզոնայի արդիւնաբերութեան առաջատար ճիւղերն են առողջապահութիւնը, հանքարդիւնաբերութիւնը (պղինձ, ոսկի, արծաթ), զբօսաշրջութիւնը (տարեկան այցելում է 40 մլն զբօսաշրջիկ), տրանսպորտը, տեղեկատուական տեխնոլոգիաները եւ էլեկտրոնային արդիւնաբերութիւնը: Արիզոնայում ապրում է աւելի քան 12 հազար հայ:



# Կարմիր Վարդան

ԱՆՃԱԽՈՒՔԻՆԸ՝ մնալն է ապրողներու յիշողութեան մէջ  
Ֆրանսացի իմաստասէր Օկիւսթ Քոնք



## ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Երկիր մոլորակի Յունուար ամիս, արեգակը իր ճանապարհի երթն էր ավարտում: Ամերիկայի Միացեալ Նահանգներ հասած հարիւր-հարիւր Հայեր, «Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ Առաջնորդարան»-ի Ղեկնողեանց տաճարի աղօթարանում ոտքի կանգնած լուռ ունկնդրում, «Պատարագ»-ի արարողութեան հնչած, Հայ վարդապետների իմաստութեան լոյսով արարուած շարականներ: Նայում էի չորս դիս, հազար դարերից եկած շարականների հնչիւնները ողողել էին նրանց դէմքերը, երեւի անոնք իրենց երկրի կարօտի արթնած ոգու շողերն էին: Այդ օրը նրանք տաճար էին եկել, իրենց Վարդանի, նրա հետ ընկած, նրա հետ պատերազմած քաջորդիների 1569 տարիների տարեկիցին, նրանց յաւերժութեան ճանապարհի անմահութեան երթին աղօթք մըմնջալու: Այդ օրը հրճուել էր հոգիս, տաճարում տեսնելու այդքան շատ արեւորդիներ, որոնք եկել էին իրենց արարչական ցեղի պատուի յաւերժութեան լոյսը տանելու իրենց մանչերի սրտիկներին լցնելու: Զգում էի, որ գարնան աղուոր գեփիւռի նման կարմիր Վարդանի ու նրա հետ անմահացած քաջերի հովերն էին անցնում տաճարում: Կարմիրը Վարդանի արիւնը չէ, կարմիրը նրանց ոգին է, կարմիրը նրանց վարած մարտի քաջութեան բոցերն են, կարմիրը նրանց հայրենեաց ոգուց պայթած կրակի խարոյկն է:

Մարել էին Երուսաղեմի հայկազուն Արտաշէսեանների արքայական տոհմի գարմը: Պարթեւներն էին տիրում Հայաստան աշխարհին, որոնց բանակները երկու անգ ճակատամարտերում, Չախախել էր արեւելքի հայրենապաշտ արքաների-արքայ Հայկազուն Տիգրանը: Պարթեւների Վաղարշ հօր թագաւորը որպէսզի անխուով իշխէր իր թագաւորութիւնում, քսան վեց ցեղախմբերից կազմուած Աղուանք աշխարհում թագաւորել էր եղբօրը, Հռոմի հետ կնքած դաշնագրի համաձայն, միւս եղբօրն էլ Հայաստանի թագաւոր, նրան թագ շնորհելու ու նրանց երկրում թագադրելու պայմանով: Տրդատ Առաջինն էր նա, թուականը ք.ե. 66 թիւ: Տրդատ խոշոր շքախմբով հասել Հռոմ: Կայսր Ներոն ի նշան խաղաղութեան հրամայել Տրդատի առաջ բացել պալատի բոլոր դռները, Հայաստանը հռչակել դաշնակից երկիր, Տրդատին էլ Հայաստանի Տրդատ Ա. թագաւոր: «Արշակունիներ» կոչեցին Հայաստան-

ի գահին թագաւորող այդ տոհմը: Հայացան արշակունիները, որոնք 400 տարիներ իշխեցին Հայաստանի Սրբազան Լեւոնաշխարհի գահին, նրա մեհեաններում Նաւասարդ տօնախմբեցին, նրա պաշտպանութեան համար պատերազմեցին: Հայաստանի հողը նրանց սրտերին քաջութեան ոգի յորդեց: Պատերազմեցին ցեղակից Պարթեւատանի բանակների դէմ, յաղթական կատաղի ճակատամարտեր մղեցին իրենց տոհմը գահազրկած Սասանեանների իշխանութեան դէմ:

Հայաստան երկրի ինքնուրոյնութիւնը պահպանելու եւ երկու հակամարտ հօր կայսրութիւնների ազդեցութիւնից զերծ մնալու համար, իրենց նախնիների տոհմական հաւատքի բարեպաշտ աստուածների ոգեղէն ճշմարտութեան լոյսի հաւատքով, արեւելքում ծագած տիեզերական իմաստութեան նոր հաւատքի ջահերը վառեցին Հայաստան սրբազան լեւոնաշխարհում: Իրենց նախնիների Տիր աստուծոյ վառած գրի, բանաստեղծութեան կանթեղների լոյսը դարձեալ փայլատակեց Հայաստան սրբազան լեւոնաշխարհի վրայ: «Մուսսիւր-Մուշ» մեհեանի ներշնչանքով արարած սքանչակերտ սիւնագարդ տաճարներում դարձեալ իրենց հոգիներին բարի լոյսի անձրեւ տեղաց:

Հայերի Արշակունիների տոհմի վերջին արքան՝ մշակոյթասէր ու առաքիլի վռամշակութեան թագաւորի որդի Արտաշէս-Արտաշիւրը գուարճասէր, գեղիս կեանք վարող ու ոչ պատերազմիկ թագաւոր էր եղել: Հայաստանի նախարարներ չէին հանդուրժել նրան, գնացել Սասանեանների Տիգրան, օտար արքային յայտարարել, որ իրենց երկրին թագաւոր չէին ուզում եւ որ ինքը իշխէր Հայաստան աշխարհին: Իմաստուն Արմէն-Հայ, ինչո՞ւ անթագաւոր դարձրի քուարարչական երկիրը, գայլին բերի քու երկիր որ յօշոտէր այն: Գահընկեց անէր Արշակունի թագաւորին, նրա փոխարէն երկրի քաջ տոհմերից մէկի իշխանին ին թագադրէր: Արմին-Հայ, քու պատմութեան ամենաողբերգական պահն է այդ, ինչո՞ւ այդպէս:

Օտար թագաւորը, առանց պատերազմի նուաճեց Հայաստան սրբազան լեւոնաշխարհը, այնտեղ մարգպան կարգեց Սիւնեաց աշխարհի Բակուր նահապետի գարմից՝ իշխան Վասակ Սիւնեցուն: Կորիւն, ուսուցչապետ Մեարոպ Մաշտոցի, մասին յօրինած «Վարքում» «, պիտի գրէր՝ «Այն ժամանակ Աստուած տուեց, որ Սիւնիք իշխանութեան գլուխ անցել քաջ

Սիսական Վասակը, խելացի ու հանճարեղ եւ կանխագէտ, Աստուածային իմաստութեան շնորհքով օժտուած մի մարդ: Նա շատ նպաստեց ակետարանի քարոզչութեան գործին»:

Հայաստան աշխարհում չկար հայոց զօրք, չկար հայոց բանակ, չկար թագաւոր: Ո՞վ էր Հայկ Նահապետի ժառանգ թողած հողը պաշտպանելու, որտեղ իրենց նախնիների արարման հեւքն ու քրտինքն էր ծորել, որտեղ մղուած պաշտպանական կռիւներում իրենց որդիների արիւնն էր հոսել, որտեղ հայոց այրուցի վաշտերը հռոմէական լեգէոններն էր խորտակել: Սասանեանների լկտի թագաւոր՝ Յագկերտ, հրամայել հայոց երկրում պաշտէին այն աստուածները, որ ինքն էր պաշտում: Իրենց աշխարհի տոհմական՝ բարեպաշտ աստուածների հաւատքը լքած Հայը, հեռու աշխարհից եկած օտար վարդապետի հաւատքի լոյսի խորհուրդը ամուր գամել էր սրտին, դարերի ընթացքում այն դարձել էր Մին: Տիեզերական սքանչանքով պատած տաճարներում աղօթեցին իրենց նոր Վարդապետի լոյսին, յոյսին, հաւատքին: Աղօթեցին, իրենց ազգի յաւերժութեան, իրենց Նահապետի, իրենց թագաւորների ու հայրենեաց սրբազան հողի անասանութեանը, ի՞նչու մարեցին իրենց նախնիների աստուածների ուժի, իմաստութեան, գեղեցիկ ընկալման, բարութեան, մայրութեան խորհուրդը: Տանուլ տուին, խաչուեցին, խաչուեց երկիրն իրենց:

Առանց թագաւորի, առանց զինուորի մնացած երկիր, տարիներ ետք, գոյամարտի ճակատամարտ պիտի մղէր 451 թուականի Յունուար ամսին: Արար աշխարհում հաւատքի համար մղուող առաջին հերոսամարտն էր, հերոսամարտեր պիտի մղէին իրենց աշխարհի Սասունի լեռներում, Ջէյթթունի ու Մուսա Լեւան լեռների բարձունքներում, Արարատեան դաշտում, Շապին Գարահիսարում, Պաշ Ապարանում, իրենց արեւելեան կողմն աշխարհի Ուտիք գաւառում: Մամիկոնէից Վահանն էր 481-484 թուականներին, զօրավարի ռազմագիտութեամբ, յաղթական մարտեր մղել Սասանեանների դէմ, Նուարսակի դաշնագրով հարկադրել Պարսիկին ճանչնալու իրենց հաւատքի ազատութիւնը, մարգպանական երկիրը կառավարելու արդարութեամբ, չգործակցելու ամբարշտ իշխանների հետ:

Հայոց աշխարհի հոգեւոր դասը, իրենց թագաւորների Արտաշատ մայրաքաղաքում, ժողով էին գումարել: Չկար ազգի հովիւ, որ պատասխան գրէր, զօրքին կռուի տանէր: Երկրի հոգեւոր այդ մարդիկ նամակ գրեցին առ օտար թագաւորին՝ ... Մեր ամբողջ մարմինը քու ձեռքը տուած արաշուտով ինչ որ կամենում ես : ... քու սուրը մեր պատնոցը, ... այս հաւատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ոչ մարդիկ, ոչ սուրը եւ ոչ էլ հուրը»: Այդ ինչպէս էր, որ իրենց հոգիներում հանգել էր իրենց նահապետի ազատատենչ ոգին, նախնիների հայկազուն քաջերի գէնքի շաչիւնը: Ինչո՞ւ ոչ պարանոցի փոխարէն նրանց դիմաց սուր չձօճեցին:

Չայրացել էր պարսից թագաւորը: Մարած սրտով նախարարներ, թողած իրենց տներ, թողած իրենց այրուցի հեծեալ վաշտեր: Տիգրան էին գնում պարսից թագաւորին ներկայանալու: Դուք՝ Արատուայի, Հայաստայի, Միտանի, Ար-

մինայի, արիական հայկազուն իշխանների յետնորդներ, ի՞նչու սպառազէն զօրքը գլխաւորած չգնացիք հայոց երկրի սահման, կռուի կանչել պարսից թագաւորին, ինչպէս շատ անգամներ արել էին հայոց աշխարհի Արշակունի թագաւորներ: Ներկայացել էին Տիգրանի թագաւորին, խիստ զայրացած էր պարսից թագաւորը, սպառնացել պատժել նախարարներին: Նորէն հրամայել էր պաշտէին այն աստուծոյն, այն հաւատքին, որ ինքն էր պաշտում: Նախարարները մերժել էին ուրանալ իրենց հաւատքը, մերժել էին երկրպագել կրակին: Բանտ էին նրանց տարել: Խորհուրդ էին արել, առերես ուրանալ իրենց հաւատքը:

Յաջորդ առաւոտ, երբ արեգակն էր կրակ ժպիտով արեւագան էր ակետում, լոյս փռում Տիգրանի վրայ, հայոց նախարարները թագաւորի հետ երկրպագում էին արեւին: Թագաւորը հրճուած է, իր հպատակները պիտի պաշտէին այն աստուծոյն ու հաւատքին որ ինքն էր պաշտում: Ինչ իմանար, որ նախարարները առերես էին ուրացել իրենց հաւատքը, մտօք երկրպագում իրենց Աստուծոյն, որ իրենց վերադարձի ճանապարհին լոյս փռէր:

Նախարարներ, իրենց հետ հարիւրաւոր մոգերի ու պարսից զորքի հետ հատել էին հայոց աշխարհի սահմանը: Ընդվզել էր հայն, որդին հօր դէմ, կինը ամուսնու դէմ կռուի ելել, քարկոծել, անարգել ուրացող նախարարներին, սպանել մոգերին, երկրից վնասել պարսից զօրքը: Նոր հաւատքի խորհուրդը հայոց աշխարհին, հայոց սրտերին հոսել որպէս ոգեղէն հուր, պոռթկում էր հայոց աշխարհը, արեւմտի ովկեանի նման փոթորկում էր նոր հաւատքը, չկար թագաւոր, որ իրենց մարտի տանէր: Նենգ պարսիկը հայոց նոր հաւատքի ոգին էր սպաննում, որ տիրէր իրենց աշխարհին: Հանդարտել էր երկիրը, իմացել էին, որ նախարարները առերես էին ուրացել հայոց աշխարհին ու իրենց հոգիներին տիրած նոր հաւատքը, որպէսզի կարողանային վերադառնալ երկիր՝ ճակամարտ մղելին յանուն իրենց նոր հաւատքի: Գալիք ազգեր այն համարելու էին՝ «Աշխարհում հաւատքի համար մղուած առաջին կռիւ»: Սակայն ի՞նչու միայն հաւատքի կռիւ, նաեւ ի՞նչու ոչ նոր գահատոհմի ինքնիշխանութեան համար մղուած կռիւ:

Սակայն կար հայոց գահին հաւատարիմ Մամիկոնէից Վարդանը՝ հայոց սպարապետ Կարմիր Վարդանը: Հազար-հազար աշխարհագոր Հայ շինական ռանչպարներ եկել ազգի կռուին ու հայրենեաց փառքի պատերազմին մասնակցելու: Տարօնի Խորոնք ականի Խորենացի Մովսէս եկել աշակերտել էր իր ցեղի մեծ ուսուցիչի դպրոց, ուսանել դպրութիւն, պեղել իր ցեղի ակադեմիայի աստուածներ, մի խումբ աշակերտների հետ հասել Եգիպտոս, Աղեքսանդրիա պեղել օտար իմաստունների մատեաններ՝ գրել իր ցեղի պատմութիւնը, պատմահայր եղել: Պիտի գրեր՝ «Թէպէտ մենք փոքր անու ենք եւ շատ սահմանափակ թուով եւ շատ անգամ օտար թագաւորութեան տակ նուաճուած, բայց եւ այնպէս մեր աշխարհում էլ քաջութեան շատ գործեր կան գործուած՝ գրելու լիշատակութեան արժանի»: Քսան-

### «Ռոման» Ջախջախեց «Լեչեին» Մխիթարեանը Գոլային Փոխանցման Եւ Կոլի Յեղինակ

Իտալիայի առաջնութեան 25-րդ տուրում «Ռոման» տանը խաղաց «Լեչեի» հետ: Պորտուգալացի Պաուլու Ֆոնսեկայի գլխաւորած թիմն առաւելութեան հասաւ 4:0 հաշուով:



Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանի կողմէն փոխանցումից յետոյ 13-րդ րոպէին հաշիւը բացեց թուրք կիսապաշտպան Ջենգիզ Ունդերը: 37-րդ րոպէին Մխիթարեանն ինքը գրաւեց «Լեչեի» դարպասը բունիացի յարձակուող էդին Ջեկոյի փոխանցումից յետոյ: 70-րդ րոպէին Ջեկոն հաշիւը դարձրեց 3:0: 10 րոպէ անց մայրաքաղաքային թիմի առաւելութիւնը մեծացրեց սերբ պաշտպան Ալեքսանդր Կոլարովը: Մխիթարեանն անցկացրեց ամբողջ հանդիպումը:

«Ռոման» 42 միաւորով 5-րդն է, «Լեչեն» ունի 25 միաւոր եւ 16-րդն է:

### Ռոմալդուն Կրկնել Է Բատիստուտայի Եւ Կվարթրելայի Ռեկորդը

«Յուվենտուսի» յարձակուող Կրիշտիանու Ռոմալդուն Ա. Սերիայի 11-րդ խաղում անդրըմէջ դարձել է կոլի հեղինակ: Պորտուգալացին կրկնել է «Ֆիորենտինայի» նախկին ֆուտբոլիստ Գաբրիէլ Բատիստուտայի (1994թ) եւ «Սամպդորիայի» յարձակուող Ֆաբիո Կվարթրելայի (2018-19 թթ) ցուցանիշը:



Ռոմալդուն կոլի հեղինակ էր դարձել ՍՊԱԼ-ի դեմ կայացած խաղում, որն իր կարիերայի 1000-րդ հանդիպումն էր:

Թուրինցիները Յաղթել էին 2:1 հաշուով:

### «Միլանը» Բաց Թողեց Յաղթանակը

Իտալիայի առաջնութեան 25-րդ տուրում «Միլանը» Ֆլորենցիայում մրցեց «Ֆիորենտինայի» հետ: Գրանցուեց ոչ ոքի՝ 1:1:

56-րդ րոպէին աչքի ընկաւ հիւրերի խորուաթ յարձակուող Անտե Ռեբիչը:

62-րդ րոպէին շուետ յարձակուող Ջլատան Իբրահիմովիչի նկատմամբ վերջին յոյսի խախտման համար հեռացուեց «Ֆիորենտինայի» պրագիլացի պաշտպան Դալբերտը:

84-րդ րոպէին չիլիացի կիսապաշտպան էրիկ Պուլգարը յստակ իրացրեց 11 մետրանոցը՝ «Ֆիորենտինային» փրկելով պարտութիւնից:

«Միլանը» 36 միաւորով 7-րդ տեղում է, «Ֆիորենտինան» 13-րդն է՝ 29 միաւոր:

### «Բարսելոնան» Ջախջախեց «Էյբարին»

Սպանական Պրիմերայի 25-րդ տուրում «Բարսելոնան» սեփական յարկի տակ ընդունել է «Էյբարին» ու 5:0 հաշուով ջախջախիչ յաղթանակ է տարել մրցակցի նկատմամբ:

Կատալոնացիների կազմում հեթ-տրիկ է ձեւակերպել արգենտինացի յարձակուող Լիոնել Մեսսին՝ ընդհատելով իր ամենաերկար գոլային երաշտը 2013/14 մրցաշրջանից ի վեր: Այն կազմում էր 398 րոպէ: Եւս մէկ կոլ իր ակտիւում գրանցել է Արտուր Ռամոսը:

Մեսսին երեք կոլ խփել է առաջին կեսում՝ աչքի ընկելով խաղի 14-րդ, 37-րդ եւ 40-րդ րոպէներին: Եւս մէկ կոլ արգենտինացին հեղինակել է խաղաւարտին՝ 88-րդ րոպէին. կատալոնացիների նորեկ Մարտին Բրայթուայթի փոխանցումից յետոյ գրաւել է «Էյբարի» դարպասը: Ի դէպ, Բրայթուայթն իր նորամուտն էր նշում «Բարսելոնայի» կազմում. նա 72-րդ րոպէին է դուրս եկել դաշտ՝ փոխարինելով Անտուան Գրիգմանին: Բրայթուայթը րոպէներ անց եւս մէկ կոլային փոխանցման հեղինակ է դարձել՝ գնդակը հասցնելով արդեն Արտուր Ռամոսին, որն էլ անարգել գնդակն ուղարկել է մրցակցի դարպասը:

### «Չելսին» Ուժեղ Էր «Տոտենհեմից»

Անգլիայի առաջնութեան 27-րդ տուրում Լոնտոնի «Չելսին» ընդունեց պորտուգալացի ժողջ Մուրիլիոյի գլխաւորած «Տոտենհեմին»: 2:1 հաշուով առաւելութեան հասաւ անգլիացի Ֆրենկ Լեմպարդի գլխաւորած թիմը:

15-րդ րոպէին հաշիւը բացեց դաշտի տէրերի ֆրանսիացի յարձակուող Օլիւիէ ժիրոն, երկրորդ խաղակէսի սկզբում աչքի ընկաւ իսպանացի պաշտպան Մարկոս Ալոնսոն:

Նախավերջին րոպէին հիւրերը հաշուի տարբերութիւնը կրճատեցին «Չելսիի» գերմանացի պաշտպան Անտոնիո Ռյուզիգերի ինքնագոլի շնորհիւ: «Չելսին» 44 միաւորով չորրորդ տեղում է, «Տոտենհեմը» հետ է 4 միաւոր եւ 5-րդն է:

### Անանեանը Յաղթել Է Մատիասին, Որի Յետ Մենամարտից Յետոյ Մահացել Էր Դադաշեւը



Ռուսաստանցի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Պետրոս Անանեանը Լաս Վեգասում տեղի ունեցած վարկանիշային 10-նաունդանոց մենամարտում մրցավարների միաձայն որոշմամբ յաղթել է պուերտոռիկացի Սուբրիել Մատիասին:

Անանեանը պրոֆեսիոնալ ուինգում տարել է 15 յաղթանակ, կրել 2 պարտութիւն, 2 մենամարտ էլ աւարտել ոչ ոքի: Մատիասը կրեց առաջին պարտութիւնը կարիերայում: Նա ունէր 15 յաղթանակի շարք:

Ձիշեցնենք, որ 2019թ. Յուլիսին Մատիասի հետ մենամարտից յետոյ ուղեղի այտուցի հետեւանքով հիւանդանոցում մահացել էր ռուսաստանցի Մաքսիմ Դադաշեւը:

### WBC. Թայսոն Ֆլուրին Տեխնիկական Նոկաուտով Յաղթել Է Դեոնթեյ Ուայլդերին

Լաս Վեգասում տեղի է ունեցել պրոֆեսիոնալ բռնցքամարտի ծանր քաշային կարգում WBC վարկածով աշխարհի ախոյեանի ռեւանշ մենամարտը ամերիկացի Դեոնթեյ Ուայլդերի եւ բրիտանացի Թայսոն Ֆլուրի միջեւ:

7-րդ ռաունդում Ուայլդերի թիմը ընդունել է պարտութիւնը՝ ուինգ նետելով սպիտակ սրբիչ: Գրանցուել է տեխնիկական նոկաուտ: Մենամարտի ընթացքում Ուայլդերը երկու անգամ յայտնուել է նոկաուտում: Նշենք, որ Ֆլուրին 19,4 կգ ծանր էր մրցակցից:

Մենամարտին ներկայ են եղել նաեւ լեգենդար ծանրքաշային ախոյեանների էվանդել Զոլիֆիլդը, Լենոքս Լիւիսն ու Մայք Թայսոնը:

### Դաւիթ Յուրչենկոն Հանդէս Կը Գայ Հայաստանի Ազգային Հաւաքականում

Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիան եւ Կարագանդայի «Շախտյորի» դարպասապահ Դաւիթ Յուրչենկոն եկել են համաձայնութեան, ըստ որի 33-ամեայ դարպասապահը հանդէս կը գայ Հայաստանի ազգային հաւաքականի կազմում, յայտնում է ՀՖՖ մամուլի ծառայութիւնը:



ՀՖՖ փոխնախագահ Արմեն Նիկողոսեանը հանդիպել է Յուրչենկոյին եւ նրան յանձնել Հայաստանի ազգային ընտրանու անուանական խաղաշապիկը:

Յուրչենկոն արդէն Մարտին կը միանայ Հայաստանի ազգային հաւաքականին՝ պատրաստուելու

### «Մանչեսթեր Սիթին» Պարտութեան Մատնեց «Լեսթեր Սիթին»

Անգլիայի առաջնութեան 27-րդ տուրում չեմպիոն «Մանչեսթեր Սիթին» հիւրընկալուեց «Լեսթեր Սիթիին»: Կատալոնացի Խոսեպ Գվարդիոլայի գլխաւորած թիմն առաւելութեան հասաւ նուազագոյն հաշուով: Միակ կոլը վերջնամասում խփեց պրագիլացի յարձակուող Գաբրիել ժեզուսը: Երկրորդ խաղակէսում հաշիւը կարող էր բացել արժենթինացի յարձակուող Սերխիո Ագուերոն, սակայն չկարողացաւ արդիւնաւէտ իրացնել 11 մետրանոցը: Դաշտի տերերի դանիացի դարպասապահ Կասպեր Շմեյխելը հետ մղեց գնդակը:

«Մանչեսթեր Սիթին» 57 միաւորով երկրորդն է: «Լեսթեր Սիթին» ունի 50 միաւոր եւ երրորդ տեղում է: Առաջատար «Լիվերպոլը» 26 խաղում վաստակել է 76 միաւոր:

### Լոնտոնում Պատրաստ Են Ընդունել Օլիմպիադա-2020-ը

Լոնտոնում դիմել են Օլիմպիական կոմիտէին՝ խնդրելով դիտարկել քաղաքը Տոկիոյին այլընտրանք 2020 թ. օլիմպիական խաղերն անցկացնելու համար: Լոնտոնի քաղաքապետի թեկնածու Շոն Բեյլին

# Կարմիր Վարդան

Շարունակուած էջ 17-էն

եօթ նախարարներ իրենց սպառազէն գինեալներով եկել Վարդանի դրօշի տակ կռուելու յանուն հայոց աշխարհում ծագած նոր արեւի «առաւօտ լոյսին», յանուն հայրենեաց պաշտպանութեան, յանուն իրենց նոր հաւատքի, որին փառել էին իրենց նախնիների հաւատքի իմաստութեան լոյսի շողերը, ցեղի ոգու լոյսի շողերը: Վարդանը վաթսուն վեց հազար զինուոր դարձած շինականներին տարել Արտազու գաւառի Աւարայրի դաշտ, տղմուտ գետի ափեր: Ղեկնող Երէջի գլխաւորութեամբ բազում երէցներ եկել կռուի դաշտ, մայրամուտի պատարագ մատուցել, խաչով օրհնել զօրքի սուրբերը, նիգակները, վահանները եւ նրանց կռուելու ոգին: Չէ, Նահապետի ժառանգ թողած հողի, Թորգոմա ցեղի պաշտամունքի ոգին է սուրբ, որը գէնքը դարձնում հատու: Հայոց նախարարներ, արդեօք իրենց սրբազան լեռնաշխարհի պաշտպանութեան համար այդպէս շտապ պիտի գալի՞ն կռուի դաշտ, այն միշտ չէր պատահել: Քաջ մամիկոնէից վարդան զօրավար, ինչո՞ւ բաց դաշտ իջար պատերազմելու, նրանց կանչէիր քու լեռների երկիր, նրանց բանակի փղերին գլորէիք հայոց ձորերի վիհեր, օտար երկրի զօրքին գրկէիք զօրաշարժելու հնարաւորութիւնից:

Ինչու էին գնում բաց դաշտում կռուելու ահաւոր ռազմական ուժ բերած թշնամու դէմ: Վարդան ու բազում հանճարեղ զօրավարներ պարսկական ու բելգանդական բանակները առաջնորդել էին, կռուի դաշտում իրենց ռազմագիտական հանճարի շնորհիւ՝ յաղթական ճակատամարտեր մղել: Միայն ռազմավարութիւն էր կիրառուել, հաւատքից առաւել, ցեղի, հայրենեաց երկրի հողի պաշտպանութեան համար պատերազմ պիտի հուշակուէր, պարսիկի նպատակն էր կայսրութեան ժողովուրդներին ձուլել իրենց ազգի զարմի մէջ, տիրել նրանց երկրներին: Առաւելաբար այդ կռիւր հանուն նոր հաւատքի էր, նրա համար մարտիրոսանալու էին գնում, անմահութեան համար իմացեալ մահուան էին գնում: Կռուի են գնում ոչ թէ մահանալու, այլ մահ սփռելու թշնամու շարքերին: Ինչո՞ւ շտապեցիք կռուի գնալու, խորամանկէիք պարսիկ զօրքին ձեր լեռներ առաջնորդելու, ձեր հողը պղծած թշնամու շարքերին մահ սփռէիք, երկրում ապստամբութեան դրօշ ծածանէիք: Աւանդում են, որ հայոց աշխարհում մի քանի միլիոն հայեր էին եղել, արքաների-արքայ Մեծն Տիգրանը յիսուն բիւր զինուոր էր կռուի տարել, տիրել արեւելքին, երկրի օրհասական պահին, երբ կործանում էին ձեր նոր հաւատքը, տիրում ձեր

աշխարհին, երկրի միլիոնաւոր հայերին կռուի չտարաք երկրի միասնութիւնը պահպանելու եւ այո, Միւսիեաց վասակ իշխանին նման չհանդգնեցիք կանչելու, որ նորէն երկրին հայկազուն իշխաններից մէկի զարմից թագաւոր ուզում, ազնուագարմ հայրենեաց վասակ իշխանին պատմութիւն տարաք ճակատին դաւաճանի խարան տաճելով, ո՞ւմ էր դաւաճանել, Պարսիկին, որը ուզում էր ձեր ցեղին իր ազգի զարմի հետ ձուլել: Միայնուցիք, սխալուեցին եւ մնացինք խիստ ածու մի ազգ, քաջեր չեղանք որ մեր գէնքը լինէր մեր սահմանը՝ «Սահման քաջած, գէնն իւրեանց», քարոզել էր Պատմահայր Խորենացի Մովսէսը:

Վասակ Միւսի, հայոց աշխարհի ինն նախարարների հետ մնացել ուրացող, ստիպողաբար միացել պարսիկ բանակին: Մինչեւ Հայոց պատերազմը, Վասակ մարզպետ էր, Պարսից արքունիքի թշնամիների հետ կապ էր հաստատել միասին ապստամբելու նրա դէմ: Արդեօք հաւատքից առաւել ազգի, իր երկրի պետականութեան վերականգման յետամուտ չի եղել նա, արդեօք հայ եկեղեցու կողմից նրան դաւաճանի պիտակով խարանելը շատ խնդրահարուց չէ՞, իսկ որ Միւսեաց աշխարհի ժառանգ նրա երկու որդիները պատանդ էին արքունիքում, եւ ինքը նաեւ «Հայր» էր...: Ուրացեալ միլիոնաւոր հայեր հիմա թուրքի յափշտակած հայոց հողում իրենց ինքնութիւնն են փնտռում: Սպասում են, որ հայոց արեւմտեան կողմն աշխարհի երբ հայու նոր արեւագալ ծագի, որ նորէն աղօթեն Աստծուն, ով է ասել, որ ցեղի, ազգի պատկանելութիւնը միայն հաւատքով բնորոշուած: Իսլամը դաւանած Զրահադաշտը նորէն պարսիկ է, եւ ոչ հրեայ ու արաբ:

Արեւագալ, լոյս էր իջել Արտազու գաւառի Աւարայրի դաշտին, արեւն էր վառում Տղմուտ գետի ջրերը, լոյսի սպիտակ անձրեւ տեղում նրա վրայ: Հայոց իշխանների գլխաւորած չորս զօրամասերի այրուծին, սպառազէն մարտիկները ճեղքելով Տղմուտի արեւոտ ջրերը, Վահագնի կրակածին քաջութեամբ յարձակուել պարսից զօրքի վրայ: Սուրբի շաջիւններից շանթեր էին բեկանուում, աղեղնաւորների արձակած նետերը պատռում պարսիկի վահանները, ձիավար մարտիկների նիգակները որպէս արեւի ճառագայթներ խոցում թշնամուն, զարկում էին, զարնում էին: Նրանց քաջութեան մրրիկները ալեկոծում դաշտը, կռուողների որոտագին կանչերը սիրտ պատռում, խաչուած սուրբերից ժայթքած կայծերը հրդեհում մարտի շարքերը: Հայ շինականի հոգում վառում էին նոր հաւատքի լոյսերի ջահերը, հայրենեաց հողի

պաշտամունքի ոգին, Վահագնի քաջութեան բոցերը:

Վարդան իր դիտակետից նկատել, որ թշնամին ընծում է հայոց զօրքի ձախ թեւը: Օժանդակ վաշտով յարձակում կազմակերպել այդ կողմը, ետ մղում թշնամուն: Իրարանցում առաջացել թշնամու շարքերում, դեռեւս պարտութիւն չտեսած Մատեան գունդը նահանջում էր ռազմի դաշտից, Պարսից զօրավարը նոր վաշտերով համալրում ճակատի այդ կողմը, Վարդան մտել էր թշնամու շարքեր, հասել մատեան գունդ, շրջապատել էին Վարդանին... Վարդան խոցուել էր... հայոց զօրքում խուժապ... կռիւր շարունակելու համար ոչ ոք գլխաւորել էր հայոց զօրքը, սկսել էին լեռներ նահանջել, ցիրուցան եղել հրամանատար չունեցող բանակը: Պարսիկ զօրքը ասպատակել երկիրը, պատերազմի անխոհեմ ռազմավարութիւն:

Հայոց պատերազմին մասնակց եղիշէ պատմիչը վկայում է, որ կռուում զոհուել էին 1036 հայեր, իսկ պարսից կողմից 3544 պարսիկներ: Հայոց ութը նախարարական տների ճրագներն էին մարել: Հայերը Վարդանի ու հայոց անթագաւոր երկրի այդ պատերազմը կոչում են «Բարոյական Յաղթանակ»: Տանուլ տուած կռիւ, պատերազմի դաշտից փախած գիւնուոր, թշնամու աւերած երկիր, կալանուած նախարարներ, փլած բերդեր ու տաճարներ, երկրում լիքը մոգեր, ի՞նչ էր յաղթանակել Հայը: Իրենց տոհմական հաւատքի փոխարէն, միայն Վահանի 481-484 թուականների յաղթական կռիւների շնորհիւ Պարսիկ երկիրը նոր հաւատքի ու խղճի ազատութիւն, նորէն մարզպանութիւն իրաւունք շնորհել հայոց աշխարհին:

Ամերիկայի Միացեալ Նահանգների «Հայաստանեան Առաքելական Եկեղեցուց» արեւմտեան առաջնորդարանի հանդիսութիւնների սրահը լեցուն էր հայերով, Վարդանի մղած պատերազմն էին փառաբանելու: Աւելի քան 15 դարեր առաջ Արտազու գաւառի Աւարայրի դաշտում կռուում կարմրած Վարդանին, պատերազմում ընկած իշխաններին, շինականներին թեւանցուկ արած Հայը քայլում է իր պատմութեան ճամբաներով: Ուրքի էին հայերը, առաջին շարքում կանգնած «Ղեկնողեան Դաս»-ի երէցները երգում էին, երգում էին պատարագին եկած սրտեր, կարծես

մեղրածոր մեղեդիի հնչիւններն էին երկնքից անձրեւում, իմ էլ հոգում հոսում հայոց քաջերի ոգին, Վարդանի ու նրա հետ կռուի ելած դիւցազունների մարտնչելու յորձանքը ալիքում սրտիս ծովակը: Ահա մի քանի տողեր այդ երգից, որը յօրինել է Վասպուրականի հոգեւոր առաջնորդ՝ Գարեգին Սրուանձտեանը, որը առաջինը գրի էր արել Սասունցի Դաւիթ դիւցաղծներգութիւնը, իրեն անուանակոչել հայոց պատերազմում ընկած «Սրուանձտեան ցեղից Գարեգին»

Թէ հայրենեաց պսակադիր Գողթնի քնարք լռել եմ, երկնից թող գամ անմահ հոգիք: Հայոց քաջեր պսակել: Ոի Վարդանայ անուան արծան Մասիս կանգնի մահարձան, Մեմաստաններ խաչն ի գմբէթ, Աւետարան սուրբ հաւատ: Լուսին, լուսին աջօրդ անքուն, Պահէ Հայու ոսկորներ, Եւ Մայիսի զուարթ ցօղով Յօղէ անոնց շիրիմներ:

Վարդան քաջութեան խորհրդանիշ եղաւ: Մանչեր հայոց, փայտը սուր շինած, ռազմի երթի քայլք նմանակելով՝

«Քաջ Վարդանն եմ» կանչելով տողանցում են: Վարդանը քաջութեան ոգու խորհուրդ եղաւ, բանաստեղծներ նրան տաղեր, երգահաններ տաղերգեր ձօնեցին: Բանաստեղծութեան իշխան՝ Վահան թէքէեան՝

Գիշեր մը երբեք այսպէս լուռ ու լուրջ

Չէ դիզուած հսկայ բանակի մը շուրջ:

Եւ բանակ մը երբեք, խաւարի մէջտեղ,

Չէ եղած այսպէս լուսագեղ, անմեղ:

Դաշտն արշալոյսին խունկ է, կը մխայ,

Ձէնքերու շաչիւն իր շուրջ ծնծոյայ:

Կը նետուին ընդէն սուրին ցիգակին,

Որոնք խաչերուն վրայ կը կոտորին,

Վարդանն իր ճերմակ ձիով, զրահով,

Ամենէն առաջ, ամենքին քով: Վարդանի հոգին, հրագունդ անշէջ,

Կը մտնէ ամեն հայու հոգւոյն մէջ:

Կը զարնէ խաչովն ու սուրովը գիր

Կը գրէ, կ'օրհնէ Վարդանը Կարմիր:

# Լոնտոնում Պատրաստ Եմ Ընդունել


Շարունակուած էջ 18-էն

մտահոգութիւն է յայտնել ձապոնիայում կորոնավիրուսի տարածման պատճառով, որտեղ մի քանի հարիւր մարդ է վարակուած:

Նա թուրքերում գրել է, որ հաշուի առնելով բռնկուած կորոնավիրուսը, օլիմպիական կոմիտէին կոչ է անում լրջօրէն մտածել այն մասին, որ անհրաժեշտութեան դէպքում Լոնտոնը կարող է ընդունել Օլիմպիական խաղերը:

**ՑԱՒԱԿՑԱԿԱՆ**  
Արաքսի Հէքիմեանի մահուան առթիւ մեր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնենք Տէր եւ Տիկ. ընկ. Միսաք եւ Թամար Հէքիմեաններուն:  
«Մասիս»

**ՑԱՒԱԿՑԱԿԱՆ**  
Արաքսի Հէքիմեանի մահուան առթիւ Լոս Անճելոսի Կիլիկեան Բարեսիրական Միութեան վարչութիւնը իր խորագգաց ցաւակցութիւնը կը յայտնէ միութեան վարչական Տէր եւ Տիկ. Միսաք եւ Թամար Հէքիմեաններուն:  
Այս առթիւ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:



NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

MEMBER

**Garine Depoyan**

626-755-4773  
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
ghdepoyan@gmail.com




# ARMENIAN COUNCIL OF AMERICA Political Action Committee

## 2020 PRIMARY ELECTIONS ENDORSEMENTS VOTE FOR

### PRESIDENTIAL PRIMARY



Bernie Sanders



### US SENATE



Jack Reed  
Rhode Island

Dick Durbin  
Illinois



Sara Gideon  
Maine

Mark Warner  
Virginia

### UNITED STATES HOUSE OF REPRESENTATIVES



### CA STATE ASSEMBLY



### CA STATE SENATE



### LOS ANGELES COUNTY



### LOS ANGELES CITY COUNCIL



### CITY OF PASADENA



### CITY OF GLENDALE



Vartan Gharpetian  
Glendale City Council

### DEMOCRATIC CENTRAL COMMITTEE



Juliet Minassian  
43rd Assembly  
District

Kathy Kensinger  
43rd Assembly  
District

Christine Jerian  
39th Assembly  
District



Paid for by the  
Armenian Council of America-PAC  
1060 N. Allen Ave Suite 210  
Pasadena, CA 91104

